Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

# ՀՐԱԺԱՐԱԳՐԻ

## ԱԶԳԱՅԻՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՌ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ծ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
Կ. ՊՕԼԻՍ
1873

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

# ՀՐԱԺԱՐԱԳՐԻ

## ԱԶԳԱՅԻՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՌ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1873

# ԹԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

# ՀՐԱԺԱՐԱԳՐԻ

## ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

## Ա Ռ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ

Քաղաքական ժողովը հետևեալ հրաժարագիրը մատոյց Ազգ․ Ընդհանուր ժողովոյն ․

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի
Մեծաշուք Երեսփոխան էֆէնտիներ ․

Ազգային Վարչութիւնս պատկառելի ժողովոյդ ընտրութեամբը պաշտօնի կոչուած օրէն, ըստ պարտաւորութեան իւրում ուղեցոյց ունեցաւ ազգային Սահմանադրութիւնը, զոր արդէն վերաքննեալ քանի մը մասանց համաձայն գործադրել ձեռնարկեց ․ և պարտաւոր կը մնամք մեր խղճին առջև, եթէ մեր փորձառութեամբը չփութանք հաստատել և յայտարարել որ Կեդր․ Վարչութեան կողմէն եթէ կամք չպակսի, Սահմանադրութիւնը ճշդիւ կրնայ գործադրուիլ, և ազգային գործոց բարւոք տնօրէնութեանը նպաստել ։

Բայց միւս կողմանէ Վարչութիւնս իր այս օրինական ընթացքին դէմ Ամեն․ Սրբազան Պատրիարք Հօր ընդդիմութիւնը կը տեսնէր ․ և մինչդեռ Վարչութիւնս յարաժամ կը յիշեցընէր թէ Սահմանադրութեան համաձայն կըրնայ վարել իր պաշտօնը, Նորին Սրբազնութիւնը կը յայտարարէր թէ ըստ ամենայնի Սահմանադրութեան հետևիլ անկարելի է ․ բայց այս անկարելութեան փաստ չի կար ․ և չեղաւ այնպիսի նիստ մը, յորում Վարչութիւնը Սահմանադրութեան մէկ յօդուածը իր տալիք որոշմանը արգելք եղած տեսնէր ։ Իսկ Ամեն․ Ս․ Պատրիարք Հայրը իր համոզման մէջ անդրդուելի կը կենար, և անձուկ վայրկեաններու մէջ Վարչութեան կը յայտարարէր թէ Պատրիարքը Վարչութեան որոշումներն ուզէ նէ կը գործադրէ ․ թէ Պատրիարքը պարտական չէ վարչական ամէն գործ Վարչութեան իմացնել, թէ ինքը իր նախորդաց պէս չկրնար որոշեալ չափով դրամ առնուլ, ևլն ։

Երբ այս խօսքերն հետզհետէ իրողութեան կերպարանք առին, և երբ Ամեն․ Ս․ Պատրիարքին ինքնին տնօրինած գործերը նկատողութեան առնելու կարգն եկաւ, և Վարչութեան որոշմանց՝ որ Սահմանադրութեան հակառակ չեն, գործադրութիւնն ընել Ս․ Պատրիարքին պարտաւորութիւնն ըլլալը բացարձակապէս յայտարարուեցաւ, այն ատեն իրերը կերպարանափոխ եղան ․ Նորին Սրբազնութիւնն ոչ ևս իր առաջին դիրքն ունէր ․ մինչև Վարչութեան անդամները և Վարչութիւնն իսկ իրենց պաշտօնական դրից մէջ անարգուե-

լու փորձեր եղան· հետեւաբար այլ եւս մեր պաշտօնավարութիւնը անկարելի եղաւ ։

Ուստի կը պարտաւորինք հրաժարիլ մեր պաշտօնէն, խոստանալով մեր համարատուութեան տեղեկագիրը քիչ օրէն ներկայացնել Ազգային Ժողովոյդ ուշադրութեանը եւ քննութեանը, եւ այսուհետեւ պատասխանատուութենէ ինքզինքնիս ազատ համարելով, սոյն հրաժարագիրս կը ներկայացնեմք պատկառելի Ժողովոյդ ։

3 օգոստոս 1873 Անդամք

հրաժարեալ Քաղ· Ժողովոյ

(Ստորագրութիւնք)

— —

Ազգային Ընդհ· Ժողովոյ Դիւանը հետեւեալ գրութիւնը ղրկեց ։

Թիւ 931

Մեծապատիւ Ատենապետ Քաղաքական Ժողովոյ Ազգ· Վարչութեան

Ազգ· Ընդհ· Ժողովն իւր երէկուան նիստին մէջ Ամեն· Սրբազան Պատրիարք Հօր եւ Վարչութեան Քաղաքական Ժողովոյ Անդամոց կողմէ ներկայացեալ հրաժարագիրն 'ի նկատի առնելով եւ տեսնելով որ պատճառաբանեալ են, յանձնաժողով մը կազմեց, նոյն հրաժարականներուն պատճառները քննելու եւ մինչեւ ութն օր տեղեկագրով մը իր քննութեան արդիւնքն Ընդհ· Ժողովոյ ներկայացնելու համար ։

Ընդհ· Ժողովոյ Դիւանս պարտք կը համարի ըստ որոշման Ժողովոյն երէկուան նիստին արդիւնքը Ձեզ հաղորդելով յայտնել թէ Ձեր Մեծապատուութեան եւ Ձեր Մեծ· Անդամակցաց հրաժարման խնդիրն առ կախ կը մնայ մինչեւ որ վերոյիշեալ յանձնաժողովն իւր տեղեկագիրը մատուցանէ Ընդհ· Ժողովոյ ։

4 օգոստոս 1873 'ի Դիւանէ Ընդհ· Ժողովոյ

| | |
|---|---|
| Ատենադպիր | Ատենապետ |
| ՏԻԳՐԱՆ | ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ· |
| ԵՈՒՍՈՒՖԵԱՆ | ՏԱՏԵԱՆ |

— —

Ազգային Ընդհ· Ժողովոյ կողմէն կարգեալ Քննիչ Յանձնաժողովն ալ հետեւեալ գրութիւնը ղրկեց ։

Թիւ 1

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի

Ազգային Քաղ· Ժողովոյ առ Ընդհ· Ժողովն ուղղած 3 օգոստոսի թուականաւ հրաժարագիրն Ընդհ· Ժողովը պատճառաբանեալ գտնելով, Յանձնաժողով մը կազմեց եւ անոր յանձնեց այն պատճառաբանութեանց քննութիւնը կատարել ։

Արդ, յանձնաժողովն այսօր հաւաքելով որոշեց առաջարկել Ձեր Մեծապատուութեան, որ իբրեւ Ատենապետ Քաղ· Ժողովոյ Ձեր Մեծ· Անդամակցաց հետ խորհրդակցելով, վերոյիշեալ հրաժարագրին պատճառաբանութիւնները, գլխաւորապէս այն կարեւոր կէտերը՝ որոնցմէ ծագած է Ամեն· Ս· Պատրիարքին եւ Քաղ· Ժողովոյդ ցաւալի անհամաձայնութիւնը, մի առ մի 'ի գրի առնուք վաւերական փաստերով, եւ յառաջիկայ հինգշաբթի օր Մեծ· ընկերակցացդ հետ 'ի միասին բարեհաճիք ներկայացնել Յանձնաժողովս 'ի Խորհրդարան Ղալաթիոյ 'ի ժամ ճիշդ վեց ։ Մնամք յարգանօք սիրոյ

7 օգոստոս 1873 Ձեր Մեծապատուութեան

| | |
|---|---|
| Խորհրդարան | աղօթարար |
| Ղալաթիոյ | Ատենապետ Քննիչ Յնձն· |
| Եկեղեցւոյ | ԽՈՐԷՆ ԵՊՍ· ՆԱՐ-ՊԷՅ |

Օգոստոս 9 հինգշաբթի առաւօտ ըստ հրաւիրանաց Ատենապետ Էֆ· ի հրաժարեալ Քաղաքական Ժողովականք գումարեցան 'ի Ղալաթիա, եւ հետեւեալ գրութիւնը պատրաստելով ղրկեցին առ Քննիչ Յանձնաժողովն ։

Գերապատիւ Ատենապետ Սրբազան

Քննիչ Յանձնաժողովոյ

Պատուարժան Յանձնաժողովոյդ 7 օգոստոս եւ 1 թուահամար գրութիւնն ստացանք ։

Ամեն· Սրբազան Պատրիարք Հօր եւ հրաժարեալ Քաղ· Ժողովոյս մէջ անհամաձայնութեան տեղի տուող խնդիրը Սահմանադրութեան գործադրութիւնն ըլլալը արդէն յայտնի է· եւ սա ալ ոչ թէ Սահմանադրութեան բառական խնդիր է, այլ ոգւոյն եւ սկզբանց խնդիր· ահա քանի մը օրինակներ տանք, որոնց մանրամասն բացատրութիւնն ամբողջ Վարչութեան արձանագրութեանց տումարներուն մէջ կը գտնուի, զոր ցուցնել պատրաստ ենք ։

1· Վանայ խնդրոյն մէջ առանց քննութեան

և առանց դատաստանի Պօղոս վարդապետը պաշտօնէ կը դադրեցնէ, և առանց Կրօն. և Քաղ. ժողովոց գիտութեան կ'աքսորէ:

2. Ըստ որոշման Ընդհ. ժողովոյ 'ի Ս. Երուսաղէմ քաշուած հեռագրին վրայ Նորին Սրբազնութեան տուած բացատրութիւնը գոհացուցիչ չգտնուեցաւ. և՛ յետոյ մինչդեռ Ս. Պատրիարք Հայրը կըսէր թէ Վարչութիւնը հրաժարած ըլլալուն ինք այդ հեռագիրը ղրկեր է, հաստատուեցաւ թէ Կրօն. ժողովը գոյութիւն և մայիս 1 ին ալ նիստ ունի եղեր, որուն գիտցած չէ Ս. Պատրիարք Հայրը մայիս 3 ին քաշած հեռագրին համար:

3. Կիլիկիոյ կաթողիկոսին իրաւասութեան սահմանը առաջնորդական խնդրոց մէջ:

Սրբազան Պատրիարքը Սահմանադրութեան հակառակ կ'առաջարկէր Կիլիկիոյ կաթողիկոսին յանձնել այն պաշտօնը, որ Կեդր. Վարչութիւնն ունի ինչպէս ամէն գաւառաց, նոյնպէս և Կիլիկիոյ գաւառաց վրայ:

4. Քաղ. ժողովոյ որոշման թուղթը, որով Ս. Պատրիարք Հօր ամսականին խնդիրը կը ծանուցուէր առ Տնտ. խորհուրդն, 'ի ներկայութեան Տնտ. խորհրդոյ Ս. Պատրիարքէն կը պատռուի:

5. Քաղ. ժողովոյ որոշման հակառակ մուքաթա կը հաւաքէ:

6. Քաղ. ժողովոյ որոշման հակառակ Մշոյ Ս. Կարապետի վանուց մուքաթայի պարտուց համար գիր գրելը կարգիլէ, մինչդեռ 33300 ղշ. ցվերջ ապրիլի պարտական է Մշոյ Ս Կարապետի վանքը, որոյ վանահայր Նորին Սրբազնութիւնն է:

7. Բաղէշի առաջնորդին՝ Խառն ժողովոյ որոշմանը հակառակ կերպով անոր դադարման պաշտօնագիր կը գրէ Նորին Սրբազնութիւնը:

8. Գատըգիւղի թաղ. խնդրոյն մէջ հակառակ որոշման Քաղ. ժողովոյ՝ Ս. Պատրիարքը հրաժարական կ'ընդունի. և յետոյ ալ Քաղ. ժողովոյ որոշումը չը գործադրեր: Գատըգիւղի թաղականին բողոքն ալ առանց Քաղ. ժողովոյ ցուցընելու Պատրիարքական փոխանորդը 'ի քննութիւն Տնտ. խորհրդոյ կը յանձնէ, և Տնտ. խորհուրդն ալ ստիպողականութիւն կուտայ այդ խնդրոյն.

9. Բարձրագոյն Դրան նախարարաց որոշուած այցելութիւնները մեծաւ մասամբ և ժամանակին չը կատարելը:

10. Սրբազան Պատրիարք Հայրը իր գահակալութեան օրէն սկսեալ 10000 ղշ. ամսական կը պահանջէ հակառակ նախորդ Վարչութեան կրկին որոշմանց, որոց մէջ Սրբազան Պատրիարք Հայրը համամիտ գտնուած է: Այս պատճառաւ ց1 մայիս ներկայ տարւոյս 28392 ղշ. պարտական է Սրբազան Պատրիարքը կեդրոնական սնտուկին:

11. Սկիզբէն մինչև վերջը Սրբազան Պատրիարք Հայրը նախատանօք կը վարուէր ժողովականաց և ժողովոյ դէմ, մինչև օտարին ըրած անարգանաց իրաւունք տալէ զատ, Նորին Սրբազնութիւնն ալ սկսաւ անարգել և խարդախ անուանել Քաղ. ժողովը. ա՛լ խարդախ անուանեալ Քաղ. ժողով մը ժողովարանէն դուրս կը վռնտուի ալ և կը ծեծուի ալ:

9 օգոստոս 1873 Անդամք

հրաժարեալ Քաղ. ժողովոյ:

(Մ--ր--Գր--Բ--Ն-)

Այն տասնեմէկ յօդուածոց վրայ թէև նոյն օրը Քննիչ Յանձնաժողովոյ խնդրած բացատրութիւնները ատենագրութեանց միջոցաւ տրըուեցան. բայց որպէս զի ազգային երեսփոխան տեարք լիովին տեղեկութիւն ունենան, հարկ տեսնուեցաւ նոյն խնդրոց վրայ Քաղ. ժողովոյ և Խառն ժողովոյ ատենագրութեանց մասերը քաղելով հրատարակել:

## Ա. ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ատենագրութիւն Քաղ. ժողովոյ

27 յուլիս 1872

Բազմաթիւ վանեցիք ներկայանալով, ժողովը նախ այս խնդրոյն վրայ Ս. Նախագահէն տեղեկութիւն խնդրեց, և տեղեկացաւ որ Ս. Նախագահին և Կրօն. ժողովոյն մէջ անհամաձայնութիւն ծագած է այս խնդրոյն առթիւ, և Կրօն. ժողովոյ կողմէ Ընդհ. ժողովոյն բողոքագիր մը ուղղուած է:

Ս. Նախագահն այս անհամաձայնութեան պատճառը հետևեալ կերպիւ բացատրեց. «Նախորդ Քաղ. ժողովոյ հրաժարելէն ետև Վանայ խնդիրն իմ առանձին պատասխանատուութեանս տակ առնելով գործադրած եմ. և

թէ՝ ինչո՞ւ այսպէս ըրի. — անոր համար որ նախ Կրօն. ժողովոյ յանձնարարեցի այս խնդիրն, նա չուզեց իւր վրայ առնուլ, որով պարտաւորեցայ ինքնին գործադրել. Պօղոս վարդապետը պաշտօնէն ձգեցի, ծանր ամբաստանութիւններ կային իւր վրայ, նա վիճակին յառաջդիմութեան և դաստիարակութեան զարգացման թշնամի է եղեր: Հիմա թէ որ կուզէ ժողովդ, այս խնդիրն ինք կը յուզէ, թէ որ կուզէ, Ընդհ. ժողովոյ վճռոյն կ՚սպասէ, քանի որ բողոք տրուած է Կրօն. ժողովոյ կողմէն:

Ժողովը չուզեց ինքնին յուզել այս խնդիրը, այլ որոշեց յառաջիկայ հինգշաբթի օր գումարուելիք Խառն ժողովոյ ներկայութեան յուզել այս խնդիրն ալ, եթէ Կրօն. ժողովը հաճի:

Ուստի ներկայացող բազմաթիւ վանեցւոց պատասխան տրուեցաւ որ առ այժմ սպասեն:

——

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

3 օգոստոս 1872

Քաղ. ժողովն իւր նախընթաց նստին մէջ Վանայ Պօղոս վարդապետի մասին Սրբազան Պատրիարքէն Կրօն. ժողովոյ և իւր մէջ ծագած անհամաձայնութեան վրայ պէտք եղած տեղեկութիւններն ստանալէ ետև, որոշած էր որ Խառն ժողովով յուզուի այս խնդիրն՝ եթէ Կրօն. ժողովը բարեհաճի:

Շատ մը խօսքեր ըլլալէ ետև, վերջապէս Կրօն. ժողովն ընդունեց սա՛ առաջարկութիւնը թէ, իր առ Ընդհ. ժողովն մատուցած բողոքը ետ չառնելով, յառաջիկայ Խառն ժողովոյ նիստին մէջ Վանայ խնդրոյն առթիւ իր և Ս. Պատրիարք Հօր մէջ ծագած անհամաձայնութիւնը քննուի. և եթէ երկուց ժողովոց մէջ համաձայնութիւն մը չգոյանայ, Կրօն. ժողովն ազատ լինի այնուհետև իւր բողոքագիրն Ընդհ. ժողովոյ խնդրոց կարգն անցընել տալ:

——

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

10 օգոստոս 1872

Այս խնդիրը Խառն ժողովոյն մէջ յուզուելու համար Կրօն. ժողովն արդէն իւր հաճութիւնը տուած ըլլալով, այս մասին Ս. Պատրիարք Հօր և Կրօն. ժողովոյ մէջ տիրած անհամաձայնութեան վրայ նախ՝ կրօնական Հարց կողմէ հետևեալ բացատրութիւնները տրուեցան:

«Խնդրոյն շարժառիթը թէև Վանայ Պօղոս վարդապետին Սրբազան Պատրիարք Հօր ինքնակամ անօրէնութեամբ պաշտօնէ դադրիլն եղած է. սակայն Կրօն. ժողովն անձնական նկատմունքն 'ի բաց առնլով և խնդիրը միմիայն իրաւանց և սկզբունքի կէտերուն մէջ ամփոփելով, ըստ տրամադրութեանց Ազգ. Սահմանադրութեան նախ՝ չկրնար ընդունիլ որ ամբաստանեալ ո՛ր և է պաշտօնեայ մը առանց օրինական քննութեան և առանց ձեռնհաս ժողովոյն գիտութեան Սրբազան Պատրիարքն ինքնին դադրեցնէ իւր պաշտօնէն, և երկրորդ ամբաստանեալ պաշտօնէի մը վրայ ըլլալիք քննութիւնը չէ թէ հօս, այլ բուն իր տեղը կատարուիլն պատշաճ կը դատէ, մինչդեռ Ս. Պատրիարքն ընդհակառակը կը պահանջէ որ Վանայ Պօղոս վարդապետի քննութիւնը հօս կատարուի»:

Կրօն. ժողովն այս բացատրութիւնները տալէ ետև, յաւելցուց թէ կը լսուի նաև որ Վանայ Պօղոս վարդապետին աքսորման համար թագրիր գրուեր և հրամանագիր առնուեր է, մինչդեռ Կրօն. ժողովն այս մասին բնաւ տեղեկութիւն չունի և որոշում մ՚ըրած չէ:

Սրբազան Պատրիարք. — Վանայ Պօղոս վարդապետի խնդիրն արդէն աշխարհածանօթ եղած խնդիրներէն մէկն է. Վանայ մէջ 10-12 տարիներէ 'ի վեր Ազգ. Սահմանադրութեան գործադրութիւն տեսնուած չէ, մինչև անգամ օրինաւորապէս Թաղ. խորհուրդ մը ընտրուած չէ դեռ, թէև ժողովուրդն անհամբեր ոգւով կը փափաքի Սահմանադրութեան գործադրութեանը:

Նախորդ Քաղ. ժողովոյ օրով երբ Սահմանադրութեան գործադիր տեսուչներ ղրկուեցան ուրիշ տեղեր, Գլակայ վանուց փոխ. վանահայր Գարեգին վարդապետն ալ Վան ղրկուեցաւ նոյն պաշտօնով. բայց Պօղոս վարդապետի ձեռքով ամեն հակառակութիւն 'ի գործ կը դրուի Գարեգին վարդապետի դէմ և անկարելի կըլլայ Սահմանադրութիւնը գործադրել: Նոյն միջոցին երբ Կրօն. ժողովը չուզեց այս խնդրոյն մէջ մտնել և Քաղ. ժողովն ալ արդէն հրաժարած էր, ինքնին դադ-

բեցուցի Պօղոս վարդապետն իւր պաշտօնէն և Վարագայ վանք ղրկելու որոշում ըրի. բայց նա հոն չերթայ և իւր ուզած տեղը նստելով կ'սկսի խռովել ժողովուրդը. գրեցի որ Ամլրդւոյ վանքն երթայ. դարձեալ մտիկ չըրաւ. վերջապէս հարկադրեցայ Ալաշկերտի վանքը ղրկելու համար թագրիր գրել։ Իրաց այս վիճակին մէջ Պօղոս վարդապետի կողմէն բողոքողներ գացեր են մինչև Էջմիածին, և Վեհ. Կաթողիկոսն ալ Ազգ. Ժողովոյ ուղղեալ կոնդակ մը ղրկեր է, ինչպէս հրատարակուեցաւ լրագրաց մէջ։

(Հոս Ս. Պատրիարքը բացատրեց թէ ինչպէս Պօղոս վարդապետ վերջին օրերս կայսերական կառավարութեան առջև յանցաւոր նկատուած էր։)

Իսկ ես այդ ամբաստանութեանց համար չդադրեցուցի զՊօղոս վարդապետ իւր պաշտօնէն, այլ լոկ տգէտ և բռնաւոր ըլլալուն համար. ասոր նման դեռ ուրիշներ ալ կան, ինչպէս է Խարբերդի Պետրոս վարդապետը, անոնք ալ պիտի դադրեցնեմ իրենց պաշտօնէն, և եթէ չկրնամ՝ ես ինքս պիտի դադրիմ։ Ազգ. Ժողովոյ ամեն որոշումները գործադրեր եմ, առանց կարդալու իւր որոշմանց վերաբերեալ նամակները ստորագրեր եմ. միայն Վանայ խնդրոյն մէջ բացառութիւն ըրած եմ. Թող այս խնդիրն Ընդհ. Ժողովոյ ատեանն ելնէ, հոն ալ պիտի պահանջեմ այս բացառիկ արտօնութիւնը և պիտի պաշտպանեմ զայն։

Սրբազան Պատրիարք Հօր վերջին խօսքերուն վրայ Քաղ. Ժողովոյ դիւանին կողմէ Փափազեան էֆէնտի յիշեցուց Նորին Սրբազնութեան թէ երբ խնդիրն Ընդհ. Ժողովոյ ատեանն ելնէ և ինքնին առաջնորդները դընել վերցնելու պահանջմունք ընէ, այն ատեն մեծ յուզմունք կը ծագի, քանզի Սահմանադրութիւնը չտար այդ արտօնութիւնը։

Սրբազան Պատրիարք.— Սահմանադրութիւն չկա՛յ այս սեղանին վրայ, ըստ որում վերաքննութեան տակ է ինծի համար. մինչև որ վերաքննութիւնը բոլորովին լմննայ, ես ինքնին պիտի գործադրեմ ասանկ խնդիրները՝ քանի որ հարկն ստիպէ։ Ընդհ. Ժողովոյն մէջ ալ արդէն քանիցս յայտնեցի թէ Սահմանադրութեան անձուկ շրջանակէն դուրս պիտի ելնեմ 'ի ստիպել հարկին. Վանայ համար դուրս ելայ և պէտք եղածը գործեցի, նմանապէս պիտի գործեմ ուրիշ առիթներու մէջ ալ երբ հարկը պահանջէ։ Գիտեմ թէ Ընդհ. Ժողովը չտար ինծ այդ արտօնութիւն, բայց ես խղճիս և Եկեղեցւոյ ու Աւետարանի պաշտօնէութեանս գիտակցութեամբը պիտի գործեմ, ինծի համար Սահմանադրութիւնն այսպէս կ'ըմբռնեմ. կառք մը յանձնուած է ինծ, ես զայն պիտի քալեցնեմ, քանի որ կառավարն ես եմ. երբ կառքը տարած ժամանակս տեսնեմ որ ճանբուն վրայ ապառաժ կայ, պիտի դարձնեմ և հարթ ճանբայէն պիտի տանիմ. յաւիտեան մի պահանջէք ինծմէ Սահմանադրութեան ճշդութեամբ գործադրութիւնը, ուր որ խոչընդոտ մը ելնէ իմ դէմս, պիտի անցնիմ այդ խոչընդոտը։

Փափազեան էֆ.— Սրբազան Հա՛յր, Քաղ. Ժողովոյ դիւանն ասկէ առաջ յայտարարութիւն մը ըրած էր, ը կարգը բեաւ որ նորէն կրկնեմ զայն։ Մեք գիտեմք որ Սահմանադրութիւն կայ այս սեղանին վրայ, Ընդհ. Ժողովը քանի մը կէտերն արդէն սրբագրած է, սրբագրուածները պիտի գործադրեմք, իսկ չսրբագրուածներն ալ Սահմանադրութեան համեմատ պիտի գործադրեմք. երբ դժուարին կէտ մը ելնէ առջևնիս, այն ատեն պիտի դիմեմք Ընդհ. Ժողովին։ Արդ կը հարցնեմ, Խառն Ժողովը պիտի ընդունի՞ այս յայտարարութիւնը. եթէ պիտի ընդունի՝ պէտք է յայտնի ըլլայ։

Երկու ժողովներն ալ միաբերան կը հաստատեն Փափազեան էֆ.ի ըրած յայտարարութիւնը, և իրենց ըմբռնումը սա պէս կը բացատրեն թէ՝ Սահմանադրութիւնն ազատ թողած չէ Սրբազան Պատրիարքը միայնակ գործելու, այլ երկուց ժողովոց հետ միասին պիտի գործէ. երբ ժողովները տեսնեն թէ Սահմանադրութեան մէկ կէտը խոչընդոտ մը կը յարուցանէ գործադրութեան մէջ, այն ատեն օրինաւորութեամբ պիտի դիմեն Ընդհ. Ժողովին։

Այս միջոցին Խառն Ժողովոյն մէջ շատ մը խօսքեր ըլլալէ ետև՝ Ատենապետ Մանուկեան Սենեքերիմ էֆ. ին յանձնարարութեամբ Քաղ.

ժողովոյ Ատենադպիրը հարցուց թէ՝ այս Սահմանադրութիւնը, որուն համեմատ ընտրուած են ներկայ ժողովները, ճշդիւ պիտի գործադրե՞նք թէ ո՛չ. մինչև որ այս մասին Ազգ. Վարչութեան ժողովոց և Սրբազան Նախագահին մէջ համաձայնութիւն մը չգոյանայ, անհնար պիտի ըլլայ Վարչութեան իւր պաշտօնը շարունակել ինչպէս որ պարտն է:

Սրբազան Պատրիարք Հայրը այս անգամ ուզելով իւր միտքն աւելի լաւ բացատրել, ըսաւ. երբ մեր ընթացքին վրայ ապառաժ մը տեսնեմք՝ որ արգելք կ՚ըլլայ մեզի, ի՞նչ պիտի ընեմք. այդ ապառաժին համար է որ կ՚ըսեմ թէ պիտի հարթեմ անցնիմ:

Գարակէօզեան Կարապետ էֆ. պատասխանեց. հիմա աւելի ճիշդ խօսեցաք թէ ապառաժ մը մեր դէմ ելնէ նէ ի՞նչ պիտի ընեմք. այո՛, ապառաժը միայն ձեր դէմ չպիտի ելնէ, Սրբազան Հա՛յր, այլ Վարչութեան ժողովոց դէմ միանգամայն պիտի ելնէ. և ժողովներս արդէն յայտարարութիւն ըրին թէ այդ ապառաժն հարթելու գործողութիւնը մերը չէ, այլ Ընդհ. ժողովին. երբ ապառաժ մը մեր դէմ ելնէ, պիտի դիմեմք Ընդհ. ժողովին. ահա՛ այս է օրինաւորութիւնը:

Բոլոր ժողովականք հաստատեցին այս յայտարարութիւնը, ընդ որս նաև Սրբազան Պատրիարք Հայրը, որով այս իրաւասութեան խնդիրը վերջացաւ:

Հետևապէս Քաղ. ժողովոյ դիւանը Վանայ խնդրոյն վրայ սա՛ առաջարկութիւնն ըրաւ թէ իբր բացառութիւն, դարձեալ Սրբազան Պատրիարքը պատասխանատուութիւնն իւր վրայ առնլով իւր սկսած գործը շարունակէ, այս պայմանաւ որ գաւառաց համար շինուած նոր հրահանգը ղրկուելով՝ Վանայ Գաւառական ժողովն ըստ նոյն հրահանգի կազմուելէ ետև անոր ձեռօք Առաջնորդական Տեղապահ մը ընտրուի, և Առաջնորդի ընտրութիւնը վերապահուի մինչև Պօղոս վարդապետի դատական խնդիրը վերջանայ:

Քաղ. ժողովն ընդունեց այս առաջարկութիւնը. բայց Կրօն. ժողովոյ կարծիքն ուզուած ժամանակ, նորա անդամոց մէջ կարծեաց տարբերութիւններ գոյանալով, իրենց մէջ համաձայնելու և որոշ պատասխան մը յաջորդ նստին բերելու համար ատեանը վերջացաւ:

— —

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

24 օգոստոս 1872

Սրբազան Պատրիարքը յայտարարեց թէ Վանայ խնդիրը բոլորովին աւարտած չըլլալով՝ պէտք է որ Խառն ժողովն իւր վերջին որոշումն ընէ. թէ ինք ո՛ւր որ այս խնդիրն հասուցեր է արդէն, կրնայ անկէ ետ դառնալ, և թէ մտադիր է իւր փոխանորդ Գարեգին վարդապետին հեռագրել որ անմիջապէս Վանէն մեկնի և երթայ իւր պաշտօնատեղին Գլակայ վանքը, ուր իր ներկայութեան կարօտ կարևոր գործեր կան:

Խառն ժողովը բաւական խորհրդածութենէ ետև, յիշեցուց Սրբազան Պատրիարք Հօր թէ Վանայ մէջ Սահմանադրութիւնս գործադրելու և Տեղապահ մը դնելու խնդիրն իրեն կը վերապահէ Վարչութիւնը, և կընդունի որ Գարեգին վարդապետ այն տեղէն ելլայ և ուրիշ մէկը ղրկուի հոն. իսկ Պօղոս վարդապետի մասին Նորին Սրբազնութեան կամաց և պատասխանատուութեան կը յանձնէ պէտք եղածը տնօրինել:

Սոյն Սահմանադրութեան գործադրութեան համար Վան ղրկուելիք անձին ընտրութեան գալով, Սրբազան Պատրիարքն առաջարկեց որ Մշոյ Ազգանեան Գրիգոր վարդապետը ղրկուի, որուն վրայ համոզում ունի թէ Պօղոս վարդապետին բարեկամն ըլլալով՝ կրնայ իր պաշտօնը ամենայն քաղցրութեամբ կատարել:

Խառն ժողովն ընդունելով Ս. Պատրիարք Հօր առաջարկութիւնը, որոշեց Ազգանեան Գրիգոր վարդապետն իբրև Սահմանադրութեան գործադիր Տեսուչ ուղարկել ՚ի Վան, և նոյն գործադրութեան միջոցին առաջնորդական խնդիրներն ալ տնօրինել, և Գարեգին վարդապետի հեռագրել որ իւր նախորդ պաշտօնատեղին վերադառնայ: Ազգանեան վարդապետը Մշոյ Պատրիարքական փոխանորդ ըլլալով, Վանայ առաջնորդական ընտրելի չկրնար ըլլալ:

— —

Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

28 հոկտեմբեր 1872

Պօղոս վարդապետին կուսակից վանեցիք ներկայանալով խնդիր յարուցին թէ Ս. Պատ-

րիարքն , որ նոյն վարդապետն անկէ առաջ Պայազիտի վանքը զրկած էր Բ. Դրան հրամանագրով , և յետոյ նոյն վանքէն Կարին փոխադրելու խոստում ըրած , ցարդ իւր խոստումը չէ կատարած :

Ժողովը պատասխանեց թէ Պօղոս վարդապետի խնդիրը բոլորովին Ս. Պատրիարք Հօր կը վերաբերի . ուստի որ և է տնօրէնութիւն Նորին Սրբազնութեան վերապահուած է ընել :

— —

Այս միջոցին հասաւ ՚ի Պատրիարքարան Արտաքին գործոց Վսեմ. պաշտօնեայ Խալիլ Շէրիֆ փաշայէն հետևեալ հրամանագիրը .

Էրմէնի Պաթրիկլիյինէ .

Րիւթպէթլիւ էֆէնտիմ հազրէթլէրի

Հարէքեաթը մէֆսէտէթքեարանէսինէ մէպնի մէսպուգ օլան Իսթիֆանի էօղլանլէրի վէճհ իլէ սըա էմիրնամէյի սամի Վանտան Պաեազըտտա քեային Իւչ քիլիսէյէ նագլ օլունմուշ օլան Պօղոս րահիպին օրատա տախի իգամէթի մահզուրատն սալիմ օլմասընտանըլ պէտանըյլա քէնտուսինին օլ հավալիտէն ուզագճա պիր մահալլէ թէպիտի լուզումը պու քէրրէ Էրզրում վիլաէթինտէն ինհա ու իշար օլունմըշ վէ մէրգումըն մէֆսէտէթի պէր վէճհի մուհարրէր պաթրիգխանէլէրինճէ տախի մուսատտագ պուլունմուշ օլմաղլա պէր մուճիպի իշար մէրգումըն նագլ ու իգամէթի զըմնընտա տիկէր միւնասիպ պիր մէհալլ թայինի պույրուլմասը սիեագընտա թէզքիրէի սէնավէրի թէրգիմ գըլընտը :

Ֆի 12 շապան սէնէ 89

վէ ֆի 5 Թըշրինի էվվէլ սէնէ 88

Այս հրամանագրին քով կը դնենք Ս. Պատրիարք Հօր գրած թագրիրին օրինակը , (որ Քաղ. ժողովոյ առաջին նիստին՝ այն է յուլիս 18 ին երկրորդ օրը՝ այն է յուլիս 19 ին գրած է. գիտնալ պէտք է որ յուլիս 20 ին ալ նիստ ըրած է Քաղ. ժողովը ,) որով Պօղոս վարդապետի աքսորը կը խնդրուէր .

— —

Ֆի 28 ճէմազիլ էվվէլ սէնէ 89 վէ ֆի 19 Թէմմուզ սէնէ 88 թարիխլու վէ 365 նումէրօլու մէգտումը ալիի խարիճիյէնէ եազըլան թէզքիրէ սուրէթի .

Պիր վագըթտան պէրու Վան սանճագընտա պէյնէլ միլլէ իւգաի ֆէսատ իլէ ավամ գըյլ ու գալը մուճիպ օլան րահիպ Պօղոսըն Վանտան թէպատուտու հագգընտա էկէրչի պաթրիգխանէյի գատիմինէն քէնտուսինէ պիտաէֆաթ թէպլիղաթ ու թէնպիհաթ օլունմըշ իսէ տէ , գաթ'ան ըսլահ իթմէյմէքտէ վէ ճիւհէլաեը թահրիք ու իֆսատ իթմէքտէն խալի գալմամագտա օլտուղունտան քէնտուսինին օրալարտան թէպիտի իգթիզաի հալտէն պուլունմուշ օլմաղլա րահիպի մումաիլէյհին պիր թարաֆա սավուշմամագ իւզրէ Պաեազըտ սանճագընտա քեային Իւչ քիլիսէ նամ մանասթըրըմըզա իզամ ու իգամէթ իթտիրիլմէսի իրատէի ալիէսինի շամիլ Էրզրում վիլաէթի ճէլիլէսինէ խըթապէն պիր գըթ'ա թէլէկրաֆնամէի սամի հազրէթի սատարէթբէնահիլէրի քէշիտէ պույրուլմագ սիեագընտա ճիրայէթ գըլընտը օլ պապտէ :

— —

Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

4 Նոյեմբեր 1872

Վանէն 20 ի չափ ազգայնոց ստորագրութեամբ հեռագիր մը գալով Պօղոս վարդապետին Ալաշկերտի վանքէն Կարին փոխադրուելու խնդրոյն կառավարութեան արգելք լինելուն դէմ բողոքելով , իւր վրայ դրուած քաղաքական կասկածներուն անհիմն ըլլալը կը պնդէին և քննութիւն կառաջարկէին : Ս. Պատրիարքն այս խնդիրը ժողովին բերելով խորհուրդ հարցնել ուզելուն համար , ժողովականք ինչպէս ՚ի սկզբանէ Պօղոս վարդապետի խնդրոյն պաշտօնապէս միջամտութիւն չեն ըրած , միայն կարծիք յայտնեցին թէ քանի որ կառավարութիւնը կարնոյ նահանգէն բոլորովին հեռացընել կառաջարկէ , պէտք է որ յիշեալ վարդապետը քննուի , և անոր մեղապարտ կամ անմեղ ըլլալը յայտնուի և կառավարութեան ծանուցուի . և այս պատճառաւ պէտք է որ առայժմ իւր եղած տեղը մնայ , կամ թէ ոչ ուղղակի Պօլիս բերուի : Սակայն գործադրութիւնը այս կամ այն պարագային մէջ Ս. Պատրիարքին կամացը թողուցին .

— —

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

26 ապրիլ 1873

Վանայ Պօղոս վարդապետի խնդրոյն հա-

մար վանեցիք ներկայանալով, պատասխան կ'ուզէին ։ Ժողովը այս առթիւ յիշելով թէ Սահմանադրութեան գործադրութիւնը մինչ ցարդ երկարաձգուած է, որոշեց հեռագրով բացատրութիւն պահանջել Աղուանեան Գրիգոր վարդապետէն ։

— —

Ատենագրութիւն Խառն Ժողովոյ

10 մայիս 1873

Խառն Ժողովոյ որոշմամբ քաշուած հեռագրին 'ի պատասխան Գրիգոր վարդապետ հեռագրով յայտնած էր որ փօստայով մանրամասն պիտի գրէ ։

Այս պատասխանն արձանագրել որոշուեցաւ ։

— —

Մինչև այս թուականս Պօղոս վարդապետ մնաց Սլաչկերտի վանքը, և Ս. Պատրիարքը չկրցաւ գործադրել Խալիլ Շէրիֆ փաշայի հրամանագիրը ։ Այս միջոցին (մայիս 9 թուականաւ գրուած) հետևեալ հրամանագիրն եկաւ Բ. Դռնէն 'ի Պատրիարքարան, որոյ հետ կցուած էին Պօղոս վարդապետի աղերսագիրը և աքսորանաց հրամանագրին օրինակը ։

Խարիճիյէ նէզարէթի ճէլիլէսինտէն վիրուլէն խաէն ֆի 24 րէպիւլ էվվէլ սէնէ 1290 վէ ֆի 9 մայիս սէնէ 1289 թարիխլու վէ 7 նումէրօլու թէզքիրէի ալիյէ սուրէթի տիր ։

Մուգատտէմա թարաֆը էսըլանէլէրինտէն վուգու պուլան իլթիմաս ուզէրինէ բաշիպ Պօղոս նամ քիմէսնէ Պաւէազըտ սանճագընտա քէայլին իւչ քիլիսէ նամ մանասթըրա նագլ ու իգամէ իթտիրիլմիշ վէ միւտտէթի իգամէթի խայլի վագթ օլմուշ օլտուղունտան պաշկա աֆվընը միւսթէտի թագտիմ իթմիշ օլտըղը արզըհալ մէնզուրու էսըլանէլէրի օլմագ հուգրէ պու պապտէ թէսթիր պույրուլան էմիրնամէի սամինին իխրաճ իթտիրիլմիշ օլան սուրէթի իլէ պէրապէր լէֆֆէն իրսալ օլունմագլա պու պապտէ օլան միւթալէաի էսըլանէլէրինին պէյան ու իշարը սիեագընտա թէզքիրէի սէնավէրի թէրգիմինէ իպթիտար գըլընտը(1) ։

## Բ. ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՔԱՇՈՒԱԾ ՀԵՌԱԳՐԻ ԽՆԴԻՐԸ

1872 Դեկտեմբեր 29ի Ազգային Ընդհ. Ժողովոյ նիստին մէջ որոշուեցաւ որ Ս. Պատրիարք Հայրը այս հեռագրի մասին Վարչութեան Խառն Ժողովոյ տայ իր բացատրութիւնը։

Ս. Պատրիարք Հայրը 1873 փետր. 22ի նիստին մէջ Ս. Ծննդեան այրին խնդրոյն առթիւը բացատրութիւն ուզեց տալ հեռագրին վրայ, բայց կանխաւ խնդրոյ կարգն անցած չըլլալուն համար, յաջորդ նիստին թողուեցաւ ։

Մարտ 15ի նիստի մէջ այս խնդիրը նըկատողութեան առնուեցաւ, և Ս. Պատրիարք Հայրը ներկայացուց հեռագիրը՝ որ է այս.

(1) Ս. Պատրիարքը երեք պակասութիւն նշանակած էր Պօղոս վարդապետի վրայ օգոստոս 10ի նիստին մէջ. բայց առաջինը այն է Սահմանադրութիւնը գործադրած չըլլալը բաւական պատճառ չէր կրնար չնկատուիլ, մինչդեռ ինքը Ս. Պատրիարքը միևնոյն նիստին մէջ «Սահմանադրութիւն չկայ այս սեղանին վրայ» կը յայտարարէր յատենի Խառն Ժողովոյ. երրորդը՝ այն է Պօղոս վարդապետի ագէտ և բռնաւոր ըլլալն ալ նոյնպէս բաւական չէր կրնար նկատուիլ, զի Պօղոս վարդապետ նոր չէր ծանօթացած Խրիմեան սրբազանին, որ 3 տարիէ 'ի վեր Պատրիարքութիւն կ'ընէր. մանաւանդ թէ նախորդ Վարչութեան օրով որոշուած է որ Պօղոս վարդապետ իր պաշտօնը շարունակէ մինչև ցնոր տնօրէնութիւն (տես ԶԶ. և Ղ. նիստերը նախորդ Վարչութեան). նոյն իսկ Խրիմեան սրբազան 6 տարի առաջ Պօղոս վարդապետը Մշոյ առաջնորդութեան պաշտօնին համար առաջարկած է նոյն ատենի Խառն Ժողովոյ (տես 1866 դեկտ. 2 և 12 նիստերը) ։ Երկրորդ պակասութեան՝ այն է քաղաքական յանցաւոր նկատուելուն և արդէն ալ աքսորուած ըլլալուն համար Վարչութիւնն 'ի սկզբան չմիջամտեց Պօղոս վարդապետի խնդրոյն, սպասելով Գաւառ. Ընդհ. Ժողովոյն ամբողջ կազմութիւնը, որ մինչև ցարդ ուշացաւ ։ Այժմ վերոգրեալ հրամանագիրն եկաւ, որմէ երևցաւ թէ Պօղոս վարդապետ կառավարութեան առջև յանցաւոր չը նկատուիր ։

« Գուտըս Շէրիֆտէ էրմէնի բաթրիկի
րիւթպէթլու Նասըլ էֆէնտիյէ ·

« Լատինլէրին Կայխաֆա Քիլիսէսինտէ սէ-նէտէ պիր քէրրէ րիայէթին մուսաատէ օլը-նան զիարէթլէրինին կիւնիւ Թէգտըրիսայ իթ-միշ վէ պիզիմ Լատինլէրտէն հագգըմըզ օլան չէյլէրին խյատէսիլէ մուհաֆազասընա խարի-ճիյէ Նազըրը Տէվլէթլու Փաշա էֆէնտիմիզ հազրէթլէրի գաթիէն էմր ու թէահիտ պույ-ուրմուշ օլտուղընտան հէման տիրայէթ վէ փէթանէթինիզ իքթիզասընճա էճվիպի մէզգիւր-տէ Քիլիսէի մէզպուրտէ զիյարէթ իթմէք իւզրէ Լատինլէրէ րիյայէթին մուսաատէ իթ-մէնիզի խասսէթէն րէճա իտէրիմ :

٣ Մայիս ٢٨٨

Այն նիստին մէջ թէև բաւական խօսքեր ան-ցան՝ բայց անոնք չարձանագրել որոշուեցաւ, ըստ կամաց Ս· Պատրիարք Հօր (1873) մայիս 3ին՝ յա-տուկ ժողով եղաւ այս խնդրոյն համար · և նոյն օրը երկար վիճաբանութենէ յետոյ Քաղ· ժո-ղովը մեծագոյն մասամբ գոհացուցիչ չգտաւ Ս· Պատրիարք Հօր տուած բացատրութիւնը · և Կրօն · ժողովն ալ մեծամասնութիւն չունենա-լով , ուրիշ նիստի թողուեցաւ անոնց կարծիքն ալ առնալը : Բայց յետոյ արձանագրութիւն-ներէն հասկցուեցաւ թէ Կրօն · ժողովը կայ ե-ղեր , և մայիս 1 ին ալ նիստ ունեցեր է , այս-ինքն նախորդ Քաղ · ժողովոյ վերջին նիստէն որ է 28 ապրիլի , մինչև հեռագրի թուականը մայիս 3 , այս հինգ աւուր միջոցին մէջ Կրօն · ժողովը նիստ ալ ըրած է , և Ս · Պատրիարք Հայրը անոր չէ դիմած ;

Նախորդ Քաղ · ժողովոյ հրաժեշտի վեր-ջին աւուր նիստի արձանագրութեան մէջ հե-տևեալը կը կարդանք ·

« Բանակցութիւն Արտաքին Գործոց Պաշ-տօնեայ Սէրվէր փաշայի հետ ։

« Ի 28 ապրիլի դչ · օր Ս · Պատրիարքը , փոխանորդը և Սաքայեան էֆ· արտաքին գոր-ծոց պաշտօնեայ Սէրվէր փաշային ցնտը քըր-տուն երթալով , Սուրբ կաթողիկոսին Փէրմանը դեռ չտրուելուն համար Ազգին մէջ խռովու-թեան պատճառ ըլլալը խմացուցին · և խնդրե-ցին որ շուտով յանձնուի փէրմանը ·

« Սէրվէր փաշան՝ ինչպէս ասկէ առաջ փո-խանորդին և Սաքայեան էֆ· ին տուած էր , այնպէս այս անգամ Երուսաղեմայ խնդիրը յառաջ բերաւ , ըսելով թէ պէտք է թոյլ-տուութիւն լինի Հայոց կողմանէ Լատինաց պատարագելու կայխաֆայի (Ս· Փրկչի) և Մար-Եագուպի (Ս· Յակոբայ) վանուց մէջ , որն որ երկու տարիէ ի վեր արգիլած էր Եղայի Ս · Պատրիարքը , խոստանալով որ Լատինաց կող-մանէ Հայոց բռնաբարուած իրաւունքներն ի-րենց պիտի դարձընէ Բ· Դուռն ։

« Ս · Երուսաղէմայ այս խնդրոյն վրայ Ս · Պատրիարքը փոխանորդարար կը խոստանայ միջնորդել Եղայի Պատրիարքին , եթէ Բ· Դու-ռը հաճի Հայոց իրաւունքները ՆԱԽԱՊԷՍ վե-րահաստատել , յայտնելով միանգամայն թէ Երուսաղէմայ Ս· Պատրիարքն ալ ըստ ինքեան պաշտօնատար մը լինելով , ինքն չէ կարող հը-րամայել նորա հսկողութեան յանձնուած տե-ղերուն վրայ՝ որ «ընդհանուր Հայ ազգին» կը վերաբերին , արտաքոյ կարգի տնօրէնութիւն մ՚ընել : »

Նիստ ԽԳ· 28 ապրիլ 1872

Ապրիլ 28 էն մինչև մայիս 3 , որ հեռագ-րին թուականն է , Սրբազան Պատրիարքը տե-սած չէ Սէրվէր փաշան · ոչ ալ Նորին վսե-մութենէն գրաւոր հրաման մը կայ · և Ս· Պատրիարքը փոխանակ Լատինաց սեփականու-թեանց մէջ Հայոց իրաւունքները «նախապէս» վերահաստատելու , ինք հեռագիր կը զարնէ Եղայի Պատրիարքին , որ թոյլտուութիւն ընէ Լատինաց մեր ազգին սեփականութեան մէջ ուխտերնին կատարելու ։

## Գ· ՆԻԼՈՆԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴՐԱ-ԽԱՄՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԱՌԱՋ-ՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ ՄԷՋ

Այն խնդրոյն վրայ նախ դնենք Ս · Պատ-րիարք Հօր և Վարչութեան մէջ եղած անհա-մաձայնութիւնը , որ յանկարծ երևցաւ Ազգ · Ընդհ · ժողովոյ ԾԱ · նիստին մէջ՝ որ ՚ի 15 սեպտեմբեր 1872 ։

Փափազեան Ս· էֆ· —Նախ յանուն Ազգային Վարչութեան Քաղ · ժողովոյ կը հերքեմ Օգ-սէն էֆ· ի այն դիտողութիւնը թէ Կիլիկոյ կաթողիկոսը Առաջնորդներ կը կարգէ ։ Ազգ ·

քաղ. ժողովը Սահմանադրութիւնը գործադրելու համար հրահանգներ ղրկած է գաւառները, հետևապէս նոյն իսկ Կիլիկիոյ թեմերուն մէջ ալ առաջնորդական ընտրութիւնը ըստ Սահմանադրութեան կը կատարուի Գաւառական Ընդհ. ժողովով և Կեդր. Վարչութիւնը միայն այդ ընտրութիւնը կը վաւերացնէ. իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսը կրնայ միայն օրհնութեան կոնդակ յուղարկել :

Նախագահ Սրբազան. — Այդ խօսքը ի՞նչ կը նշանակէ, բացատրեցէ՛ք :

Փափազեան Ս. էֆ. — Որովհետև Կիլիկիոյ Կաթողիկոսը իւր թեմի ժողովրդեան հոգևոր Հայրն է, առաջնորդական ընտրութեան պարագային մէջ օրհնութեան կոնդակ կուտայ իւր կողմանէ, ինչպէս որ Երուսաղէմայ Ս. Պատրիարքն ալ Եգիպտոսի առաջնորդին օրհնութեան կոնդակը կուտայ, ընտրութիւնը Սահմանադրապէս կատարուելէ և Կեդր. Վարչութեան կողմանէ վաւերացուելէ ետև :

Նախագահ Սրբազան. — Երբէք այդ կարծիքը չեմ ընդունիր և իբր Նախագահ Ազգ. Վարչութեան՝ կըսեմ թէ Կիլիկիոյ Կաթողիկոսն արտօնութիւն ունի սահմանադրապէս իւր վիճակաց առաջնորդներն հաստատելու և 'ի հարկին պաշտօնէ ձգելու, իսկ Կեդր. Վարչութիւնը Բ. Դրան Թագրիր գրելով առաջնորդական ֆէրման կառնու միայն և կը ղրկէ :

Քանի մը ժողովականք միաբերան ձայն բառնալով խօսակցութիւն մը կսկսին, և պահ մը շփոթ կը տիրէ :

Փափազեան Ս. էֆ. — Նախագահ Սրբազանին այս յայտարարութենէն կ'երևի որ իրեն և Ազգ. Վարչութեան մէջ կարծեաց անհամաձայնութիւն մը ծնած է այս խնդրոյն վրայ: Եթէ իրենց մէջ այս մասին չկրնան միաբանիլ՝ այն ատեն բնապէս անհամաձայնութեան նիւթ եղող խնդիրը Ընդհ. ժողովոյ ատեանը կը բերեն, և անոր իրաւարար որոշումով խնդիրն իւր լուծումը կստանայ : Ուրեմն այս կէտին վրայ այժմէն աւելորդ է խօսիլ :

Խօճասարեան Օ. էֆ. — Կիլիկիոյ Կաթողիկոսը չկրնար ինքնին այս տեսակ ընտրութիւններ ընել, և պէտք է որ Պոլսոյ Կեդր. Վարչութեան հետ կապակցութիւն ունենայ. ուրեմն Ազգային Վարչութիւնը թող խօսք տայ որ մինչև այս խնդիրը իւր լուծումը գտնէ առաջնորդական ընտրութիւններ չլինին Կիլիկիոյ վիճակին մէջ :

Փափազեան Ս. էֆ. — Երբ Կիլիկիոյ վիճակային առաջնորդաց ընտրութեան նկատմամբ խօսեցայ, Նախագահ Սրբազանը թիւրիմացութեամբ ըմբռնեց իմ խօսքերս, և տարբեր կարծիք յայտնեց : Ազգ. Վարչութեան ատեանին մէջ կարծեմք կարող ենք խնդիրը մէջ տեղ դնել, և գիրար համոզելով միաբանիլ. բայց եթէ հակառակը պատահի, այն ատեն ինչպէս ըսի՝ Ընդհ. ժողովոյ իրաւարարութեան վճռոյն կը դիմեմք և խնդիրը կը վերջանայ : Ուստի Ընդհ. ժողովոյ ատեանին մէջ այս կէտին վրայ այժմէն խնդիր յարուցանելու հարկ չկայ :

— —

Այս թուականէն մինչև 'ի 23 Նոյեմբեր Վարչութեան մէջ լռութիւն տիրած էր այս խնդրոյն վրայ. (չմոռնանք յիշելու թէ օգոստոս 31 ի նիստին մէջ երբ Կիլիկիոյ կաթողիկոսին այս իրաւասութեան խնդրոյն վրայ միջանկեալ կերպով խօսք բացուեցաւ, բողոք եղաւ թէ Կիլիկիոյ կաթողիկոսին իրաւունքը չէ իւր վիճակներուն մէջ Առաջնորդ դնել և վերցնել :)

Նոյեմբեր 23 ի նիստի մէջ Կիլիկիոյ կաթողիկոսին հոկտ. 25 թուականաւ երկար նամակը կարդացուեցաւ. և խնել մը ուրիշ առաջարկութեանց հետ կար նաև «կաթողիկոսին աթոռոյ տեղափոխութեան խնդիրը».

«Խառն ժողովը նկատողութեան առնելով վերոյիշեալ խնդիրները, Նախ՝ Աթոռոյն տեղափոխութեան մասին Սրբազան կաթողիկոսին յառաջ բերած պատճառներովը հանդերձ անպատշաճ դատեց Կիլիկիոյ կաթողիկոսարանին փոխադրութեան պաշտօնական նոր ձև մը ընդունիլ, և որոշեց պատասխանել որ Աթոռը դարձեալ 'ի Սիս պէտք է մնայ ըստ հին յիշատակաց. իսկ ինքն ազատ է այցելութեամբ շրջիլ իւր վիճակները և առաւել կամ նուազ ժամանակ անցընել իւր յարմար դատած տեղերը, և նստած ու ելած տեղը ժամանակին ծանուցանել 'ի Պատրիարքարան, որպէս զի

թղթակցութիւնք դիւրութեամբ ու կանոնաւորապէս շարունակուին ։

— —

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

14 դեկտեմբեր 1872

Կրօնական ժողովոյ անդամներէն Խըմիրեան Մատթէոս վարդապետը կը բողոքէ յատենի Խառն ժողովոյ Կիլիկիոյ կաթողիկոսին իւր կոնդակաց մէջ գործածած վերտառութեան դէմ, յորում անուանած է զինքն «Ծայրագոյն Պատրիարք և եպիսկոպոսապետ ամենայն Հայոց Տանն Կիլիկիոյ» . և իբր ապացոյց ՚ի մէջ կը բերէ այն կոնդակը՝ զոր վարդապետի մը տուած և Կ. Պօլիս ուղարկած է Անտիոքայ գետնաշարժէն վնասելոց ՚ի նպաստ ժողովարարութիւն ընելու համար ։ Նոյնպէս կը բողոքէ Մատթէոս վարդապետ Կիլիկիոյ կաթողիկոսին առանց Կեդր. Վարչութեան գիտութեան եպիսկոպոս և վարդապետ ձեռնադրելուն համար, և իբր օրինակ ՚ի մէջ կը բերէ Ա. Քարակէօմրիւկի Նախորդ Քարոզիչ Տէվլէթեան Յակոբ վարդապետը, որ Այնթապու վիճակը իբր Առաջնորդ ղրկուած էր, և Կիլիկիոյ կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուեր է Յարութիւն եպիսկոպոս անուամբ . և Բ. Սամաթիոյ տէր Վրթանէս այրի քահանան, որուն դատը տեսնուած և քահանայութեան անարժան ճանչուած էր, կերթայ ՚ի Սիս և վարդապետ կը ձեռնադրուի Կաթողիկոսէն ։

Քաղ. ժողովոյ անդամներէն Ղազարոսեան Ք. էֆ. ձայնակից եղաւ այս կրկին բողոքներուն ։

Փափազեան էֆ. առաջարկեց խնդրոց կարգէն անցընել այժմէն այս խնդիրն՝ անուամբ Կիլիկիոյ Կաթողիկոսին իրաւասութեան սահմանը Առաջնորդական խնդրոց մէջ . բայց նախ յանձնաժողով մը դնել խնդիրը սերտելու ծեծելու և տեղեկագիր մը բերելու համար ։ «Կիլիկիոյ Կաթողիկոսն ի՞նչ պիտի նկատուի, ըսաւ . եթէ իբրև Առաջնորդ Կիլիկիոյ ընդհանուր թեմերուն, ուրեմն ըստ Սահմանադրութեան ի՞նչ յարաբերութիւն պիտի ունենայ Կեդր . Վարչութեան և իւր թեմերուն հետ . այս է ահաւասիկ յանձնաժողովոյն քննելիք յարաբերութեան կէտերը, որուն վրայ արդէն Ս . Պատրիարքին հետ տարակարծիք գտնուեցանք յատենի Ընդհ. ժողովոյ» ։

Իսկ Մատթէոս վարդապետն ընդդէմ եկաց յանձնաժողովոյ կարգման, ըսելով թէ արդէն Ընդհ . ժողովն իւր կողմէ յանձնաժողով մը կարգած է յարաբերութեանց խնդրոյն համար, ինչո՞ւ Խառն ժողովը նորէն դնէ, քանի որ Ընդհ . ժողովը չէ լուծած իւր յանձնաժողովը ։

Հետևապէս նոր յանձնաժողով դնելու առաջարկութիւնը կախ թողուեցաւ . սակայն Փափազեան էֆ. պնդեց թէ յատենի Ընդհ . ժողովոյ անհամաձայն գտնուեցաւ Վարչութիւնը Ս . Պատրիարքին հետ, անոր համար խնդրոց կարգէն անցնելու է այս խնդիրը ։

Խառն ժողովն որոշեց իւր խնդրոց կարգէն անցնել այս խնդիրը, և անոր վրայ խօսիլը Ս . Պատրիարքի ներկայութեանը վերապահեց ։

— —

Հետզհետէ ուրիշ երկու նամակներ ալ հասան Կիլիկիոյ կաթողիկոսէն յունվար 17 և 31 թուականօք, որովք տասը առաջարկութիւններ կ՚ընէր . ասոնցմէ վեցը ուշադրութեան առնուեցան, և հարկ եղած որոշումները տրուեցան . իսկ միւս չորսն են,

Ա. Կաթողիկոսարանին Սիսէն ուրիշ տեղ փոխադրութիւնը (որն որ անընդունելի ըլլալը արդէն որոշուած էր ։)

Բ. Տէրութեան կողմէ ամսական մը սահմանուիլը ։

Գ. Սոյ վիճակաց ընդարձակուիլը .

Դ. Կաթողիկոսութեան պաշտօնին առաջնորդութիւններէ աւելի արտօնութիւն մը Տէրութեան կողմէ տրուելու կարևորութիւնը ։

Խառն ժողովն այս խնդիրներն ալ անընդունելի դատեց ։

— —

1873 մարտ 15 ին սոյն խնդրոյն վրայ ծրագիր մը բերելու պաշտօնը յանձնուեցաւ խառն յանձնաժողովոյ մը ։

— —

Ատենագրութիւն Խառն ժողովոյ

11 յունիս 1873

Հրահանգ Կիլիկիոյ Կաթողիկոսի իրաւասութեան սահմանին՝ Առաջնորդական խնդրոց մէջ ։

Այն Հրահանգը, որ կրօն. և քաղ. ժողովոց երկու Ատենադպիրներուն ձեռօք պատրաստուած էր արդէն, քննութեան առնուելէ առաջ, Սրբազան Պատրիարքը ընդհանուր կերպով դիտողութիւն ըրաւ այն կէտին վրայ թէ Կեդր. Վարչութիւնն ի՞նչ պիտի ճանչէ Կիլիկիոյ Կաթողիկոսը. — եթէ միայն իբր միջնորդ պիտի նկատէ Կիլիկիոյ թեմերուն, այն ատեն իբր Կաթողիկոս գործ չկրնար տեսնել. իսկ թէ որ Կաթողիկոս է, ուղղակի ինք պէտք է յարաբերութիւն ունենայ իր վիճակացը հետ:

Ժողովն ուզեց յօդուած առ յօդուած կարդալ ծրագիրը, և անոր վրայ Սրբազան Պատրիարքին դիտողութիւնները լսել:

Հետևապէս Ա. յօդուածը կարդացուեցաւ:

Եւ Ս. Պատրիարքը կրկնեց իւր դիտողութիւնը, որ վերը նշանակուած է, յաւելցնելով թէ ես այդ ծրագրին ամբողջութիւնը չեմ ընդունիր:

Տ. Մատթէոս վարդապետ. — Կիլիկիոյ Կաթողիկոսն եթէ ինք առանձինն ազատօրէն պիտի գործէ, ինչպէս կուզէ Սրբազան Պատրիարքը, թեմական ժողով մը պէտք է ունենայ, զոր չունի և չկրնար ունենալ. եթէ ինք միայնակ գործելով Առաջնորդական պաշտօնները կատարէ, վաւերացնէ և միայն իմաց տայ Պատրիարքարանին, այն ատեն Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իշխանութիւնը բաժնելով՝ Թուրքիոյ Հայոց ազգը երկու կեդրոն կունենայ. և եթէ այսօր այս կերպով Սահմանադրապէս բաժնուի Պոլսէն, ետևէն անմիջապէս գալիքն եկեղեցական բաժանումն է՝ որով անշուշտ Վեհ. Կաթողիկոսի սոյն խնդրոյն նկատմամբ կոնդակաւ գրածները պիտի իրականանան:

Քրիստոսատուր էֆ. — Սահմանադրութեան մէջ կէտ մը չկայ որ Կիլիկիոյ Կաթողիկոսին այդպիսի իրաւասութիւն մը տուած ըլլայ. եթէ Կիլիկիոյ Կաթողիկոսին առանձին արտօնութիւն տրուի որ իր թեմերուն մէջ առաջնորդ դնէ և վերցնէ, և ուզածը եպիսկոպոս ընէ առանց հարցնելու Կեդր. Վարչութեան, այնպիսի արտօնութիւն՝ որ այժմ Ս. Էջմիածնի Վեհ. Կաթողիկոսը չունի, ուրիշ բան պիտի չնշանակէ, բայց եթէ Սոյ Կաթողիկոսը Ընդհանրական Կաթողիկոսէն աւելի ազդեցութեան տէր պիտի ըլլայ Թուրքիոյ մէջ. և Կեդր. Վարչութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսին համար ալ նոյնը պիտի ըլլայ ինչ որ է Աղուանից Կաթողիկոսին համար, պէտք եղած ժամանակը Բ. Դրան միջնորդութիւնը պիտի ընէ, և Աղուանից նման Կիլիկեցւոց ալ ներքին գործոց չպիտի խառնուի. թերևս օր մը այդ միջնորդութեանն ալ Կիլիկիա չկարօտի. և ան ատեն բոլորովին զատ մարմին մը կը կազմէ. որ մեզի նման ցիր և ցան ազգի մը կործանումն ըսել է: Ուստի այն բանն՝ որ ընդհանրական Կաթողիկոսը չունի, երբէք Կիլիկիոյ Կաթողիկոսին չենք կրնար տալ:

Ս. Պատրիարք. —Ի՞նչ ունիս որ պիտի տաս:

Քրիստոսատուր էֆ. — Եթէ կուզուի Կիլիկիա ինքնագլուխ ճանչնալ, ըսել է մեր Պատրիարքարանի իշխանութենէն մաս մը զատելու ելեր ենք. այդ հոգևոր կամ քաղաքական իշխանութեամբ կրնայ ըլլալ. բայց հիմա Քօզանի ազդեցութիւն չկայ շնորհիւ կառավարութեան. ապստամբութեամբ օրէնք չկրնար ըլլալ. Կիլիկիոյ Կաթողիկոսն իր սահմանէն անդին անցնելու չէ:

Ս. Պատրիարքը. — Կերևի որ իմ խօսքս սխալ հասկցած էք. ես ըսել չուզեցի թէ Կաթողիկոսին բացարձակ իշխանութիւն տալու է. այլ իր թեմերուն Առաջնորդաց հետ ինք ուղղակի յարաբերութիւն ունենալու է, որպէս զի Աթոռոյն թեմական իրաւունքները պահպանուին և Առաջնորդներն առ նոյն Աթոռն ունեցած պարտաւորութիւննին կատարել գիտնան: Թէ որ այս կէտը հօս չկրնայ լուծուիլ, բնականաբար Ընդհ. Ժողովոյն պէտք է ներկայացուի:

(Այս միջոցին ձայները կը բարձրանան.)

Կրճիկեան էֆ. — (Հրահանգին Ա. յօդուածը կարդալով.) Խնդիրը սա՛ կերպով ըմբռնելու եմք. Կիլիկիոյ Կաթողիկոսն իբրև Առաջնորդ նկատուելո՞վ պիտի վարուինք իր հետ թէ ո՛չ:

Ատենադպիր Փափազեան Ս. էֆ. — Այս կէտին վրայ թէ Կիլիկիոյ Կաթողիկոսը ինք իր թեմին մէջ Առաջնորդ պիտի դնէ և վերցնէ, արդէն Ազգ. Ընդհ. Ժողովոյն մէջ յանկարծ տարակարծիք գտնուեցանք Ս. Պատրիարքին հետ, որ նոյն օրն ըսաւ թէ ես այնպէս չեմ

ճանչնար՝ ինչպէս Փափազեան կը յայտնէ, ես ալ պատասխանեցի թէ մեր մէջ կը յուզենք այս խնդիրը. և եթէ չկրնանք համաձայնիլ, Ընդհ. Ժողովին կը բերենք։ Հիմա ես իմ կարծիքս ըսեմ. Պատրիարքարանը կեդրոն է, Սահմանադրութիւնը զայս բացորոշ ցուցած է. եթէ Կիլիկիա ամբողջ մէկ առաջնորդութիւն է, և այդ պաշտօնն ալ Կիլիկիոյ Կաթողիկոսին տրուած է, մենք Կիլիկիոյ առաջնորդ կաթողիկոսին հետ յարաբերութիւն պիտի ունենանք, և ան ատեն ըստ Արժ. Մատթէոս վարդապետի Կիլիկիոյ համար Գաւառական Ընդհ. Ժողով և Գաւառ. Վարչութիւն պէտք է որ հաստատուին. և Եօզղատի, Ատանայի, Հաճընի ևլն. առաջնորդները վերնան և Գաւառ. Ժողովներն ու վարչութիւնները լուծուին. և միայն Թաղ. Խորհուրդներ ունենան։ Չէ, թէ որ Եօզղատ, Ատանա, Հաճըն մէյմէկ գաւառ պիտի նկատուին, և անոնց առաջնորդները պիտի մնան, նոյնպէս և Գաւառական Ժողովներն ու վարչութիւնները. ուրեմն Ներկայ Ծրագրին համեմատ պէտք է որ անոնց ընդ Կաթողիկոսին յարաբերութիւնները գծուին։ Կրնայ ըլլալ որ այս Ծրագիրը Ժողովը նկատողութեան առած ատեն՝ բոլորովին փոխէ. բայց չկրնար սկզբունքէն բաժնուիլ, զի Սահմանադրութեան պահանջումն է. նախ Սահմանադրութիւնը սրբագրուելու է։ Ուստի Երբազան Պատրիարք Հօր յարուցած խնդիրը լոկ վերաքննութեան պատկանելի խնդիր մ'է. Կիլիկիոյ վիճակներն արդէն խեղճ կացութեան մէջ են. իրաւասութեան խնդիրը հոդ բերած հասուցած է նոյն վիճակները. եթէ Ընդհ. Ժողովին ալ երթայ այս խնդիրը, ի՞նչ պիտի ընէ Ընդհ. Ժողովը. Սահմանադրութիւնն ինչ որ տնօրինած է, այնպէս վարուեցէք պիտի ըսէ։ Իսկ թէ որ նոր բան մը ընել ուզէ, վերաքննութեան յանձնաժողովին պիտի ղրկէ. և ո՞ գիտէ թէ ե՞րբ կը լմննայ։ Ասոր ալ հետևանքը լաւ մտածելու է, Կիլիկիոյ վիճակին այսպէս անխնամ մնացած ըլլալը աղէկ բան չէ, պատասխանատուութիւնը մեր վրայ չենք առներ։

Ս. Պատրիարք. — Պատասխանատուութիւն առնելու բան մը չկայ. առաջիկայ Նիստին Ընդհ. Ժողովին կը տանինք. ուրիշ բան է թէ որ Կաթողիկոս անունը վերցնէք և Սոյ լոկ վանահայր ճանչէք, այն ատեն ես ալ ձեզի հետ եմ և խնդիրը կը լմննայ։

Ժողովականք միահամուռ. — Արդէն իրօք ալ անանկ է։

Փափազեան էֆ. — Սահմանադրութիւնը խմբագրուած ատեն՝ Կիլիկիա նոյնպէս և Աղթամար այսօրուան ունեցած դիրքին մէջ չէին, որ անոնց համար ալ յատուկ տրամադրութիւններ դրուէին։ Կիլիկիոյ Կաթողիկոսը Կիլիկիոյ հոգևոր դէտն է, և Սոյ վանուց վանահայրը. թէ որ կրօնական խնդիր մը ծագի, ո՞րու պիտի դիմենք, —հարկաւ էջմիածնայ. արդեօք կրնա՞նք Կիլիկիոյ ալ դիմել, —ո՛չ. և ինչո՞ւ, ո՞չ ապաքէն նա ալ կաթողիկոսութիւն մ'է. ըսել է թէ Կիլիկիոյ Կաթողիկոսը միւռոն օրհնելու և իր վիճակին մէջ եպիսկոպոս ձեռնադրելու պաշտօնով՝ Սոյ վանահայրն է. ճիշդ ինչպէս որ է Երուսաղէմայ Պատրիարքը իր թեմին համար, նոյնպէս է Սոյ Կաթողիկոսն իր սահմանին մէջ. հետևապէս խնդիր չյուզենք, ուր որ է հոն պէտք է մնայ, չենք կրնար ընդարձակել իր սահմանը. այն ատեն Կիլիկիոյ խնդրոյն առթիւ ոմանց յարուցած կասկածները իրականացած կըլլան թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը բոլոր Թուրքիոյ Հայոց վրայ տարածել կ'ուզուի, ևլն։ Մեր ընելիքը սա է թէ, Կիլիկիոյ մէջ կաթողիկոս մը կայ, որ ժամանակը ծնած է և կը բերէ ցարդ. այդ յաջորդութիւնը պահուի իր մասնաւոր շրջանակին մէջ. և զայն միշտ Կ. Պոլսոյ կեդրոնին հսկողութեան ներքև ունենալ։

Կրճիկեան էֆ. — Ըստ իս որոշելի կէտն այս է. Կիլիկիոյ Կաթողիկոսն ուղղակի յարաբերութիւն պիտի ունենա՞յ իւր թեմերուն հետ։

Ս. Պատրիարք. — Իմ խօսքերս լաւ չհասկցուեցան. կուզեմ սա իմացնել ձեզ որ Կաթողիկոսն ուստի՞ իր ապրուստը պիտի ճարէ՛, թէ որ իր թեմերուն Առաջնորդներն անկէ երթան գան, և Կաթողիկոսը չճանչնան. այն ատեն իւր առաջնորդաց հետ ունենալիք յարաբերութիւնը կը շփոթի և կը տկարանայ. այս մասին հեռատեսութիւն ընելով ըսի և դարձեալ կըսեմ թէ Կաթողիկոսն ուղղակի իւր յարաբերութիւնը պէտք է ունենայ իւր վիճակաց հետ. ապա թէ ոչ աւելի լաւ է ըսել իրեն թէ լոկ վանահայր մ'ես։

Փափազեան էֆ. — Սահմանադրութեան 97 յօդուածը կըսէ.

Յօդ. 97. «Առաջնորդի ընտրութիւնը՝ նոյն «և նման Պատրիարքի ընտրութեան, գաւառական ընդհանուր ժողովով կըլլայ. և ընտրութեան տեղեկագիրը տեղւոյն խառն ժողովոյն միջոցաւ Պատրիարքին կ'ուղարկուի «Պատրիարքը կեդրոնական վարչութեան խառն «ժողովոյ համահաճութեամբը կ'անուանէ զԱռաջնորդը և Բարձրագոյն Դրան իմաց տալով «պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:

Ճիշդ այն սկզբան համաձայն, զոր Ազգ. Ընդհ. ժողովն ալ ասկէց առաջ ընդունած և հաստատած է սա խօսքերով. «ընտրութիւնը գաւառին և վաւերացումը կեդրոնին», Կիլիկիոյ վիճակ մը կընտրէ իր առաջնորդը և վարչութիւնը. և կեդրոնը՝ Կ. Պոլիս կը վաւերացնէ զայն. այս պարագային մէջ մէկ բան մը կայ որ Հրահանգին մէջ ընդունուած է. օրհնութեան կոնդակ պիտի տայ Կաթողիկոսը: Գալով իր ապրուստի խնդրոյն, Հրահանգին միւս յօդուածները կարդանք նէ պիտի տեղեկանաք թէ այդ ալ հոգացուած է:

Տ. Նիկողայոս եպիսկոպոս. — Երբ մէկ կողմէն Կաթողիկոսին կըսենք, վիճակներուդ լաւ նայէ և տիրութիւն ըրէ. և միւս կողմէն կըսենք, Առաջնորդներուդ վրայ մենք իրաւասութիւն պիտի ունենանք. միթէ ասով հակասութեան մէջ չե՞նք իյնար:

Փափազեան էֆ. — Սահմանադրութիւնը երկու տեսակ Վարչութիւն կը ճանչնայ, կեդրոնական և գաւառական, Պատրիարք և Առաջնորդ, և զորս Բ. Դուռը կը վաւերացնէ. հիմա կեդրոնին մէջ ուրիշ կեդրոն մը ևս կըրնա՞նք դնել: Հրահանգին մէջ վերջին յօդուածը տեսէք, ձեր ամեն առարկութեանց կը պատասխանէ. առաջնորդացուաց ընդհանուր ցանկը Կաթողիկոսին կը ղրկենք, նա պիտի ստորագրէ և տայ իր Թեմական գաւառին Առաջնորդական ընտրութեան համար. ընդհանուր սկզբունք է այս, որմէ անհնար է դուրս ելնել.

Տ. Մատթէոս վարդապետ. — Կ. Պոլսոյ Պատրիարքարանը կեդրոն է Թուրքիաբնակ Հայոց, իսկ Կիլիկիա իր Թեմերուն միայն կեդրոն է: Գիտնալու է որ Հայոց Ազգն ու Եկեղեցին Կիլիկիոյ Կաթողիկոս ըսելով նոյնը չհասկընար, ինչ որ Էջմիածնայ Կաթողիկոս ըսելով կը հասկընայ. վասն զի Կիլիկիոյ համար Կաթողիկոս բառն մասնաւոր նշանակութեամբն առնուած է. իսկ Էջմիածնայ համար բովանդակ նշանակութեամբը. և Էջմիածին Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ կեդրոնն է և հոն է միակ և վերին Կրօն. ատեանը: Եթէ Կիլիկիոյ Կաթողիկոսը Կ. Պոլսոյ կեդրոնէն խզուած անկախ ըլլալով ազատօրէն գործէ, այն ատեն երկու վերին ատեան պիտի ունենայ Հայաստանեայց Եկեղեցին, որք վերջնական վճիռներ պիտի տան. ահա Եկեղեցական բաժանումը: Ուստի քանի որ Ազգ. Կրօնական ժողովը կը գործէ Կ. Պոլսոյ Պատրիարքին նախագահութեամբ, որ Էջմիածնայ Կաթողիկոսին փոխանորդն է, Կիլիկիա ալ պէտք է որ Ազգ. Կրօն. ժողովոյ ենթարկուի. որպէս զի ազգը մի Եկեղեցական կեդրոնը ունենայ և ոչ երկու. եթէ այս կէտն օրինաց տակ չառնունք՝ բաժանումը մեր ձեռքովը որոշած պիտի լինինք:

Տ. Մկրեան Հայր. — Երկու կողմէն ալ յառաջ բերուած խօսքերուն մէջ իրաւացի փաստեր կան. սա խնդիրը ճիշդ այն յարաբերութեան խնդիրն է՝ զոր Ընդհ. ժողովն ալ կանխաւ ապահովցնել տուաւ և յետոյ վաւերացուց Կիլիկիոյ Կաթողիկոսին ընտրութիւնը. ուրեմն լաւ մտածենք. այս Հրահանգը դիցուք թէ հաստատեցինք և ղրկեցինք Կիլիկիոյ Կաթողիկոսին. բայց թէ որ Ընդհ. ժողովը դիտողութիւն մը ունենայ մէկ կէտին վրայ, այն ատեն ի՞նչ պիտի ընենք:

Փափազեան էֆ. — Տէր Հօր ըսածին մէջ սխալ մը կայ, նախ այն ջոկենք: Ընդհ. ժողովոյ յարաբերութեան խնդիր ըսածն այս չէ. հոս յուզուածը միայն Առաջնորդական խնդրոյ մէջ Կաթողիկոսին ունեցած յարաբերութեան խնդիրն է: Ազգը Սահմանադրութիւն մը ունի, որ ընդհանուրին ուղեցոյցն է. Կիլիկիա անունը վերցուր. հոն Առաջնորդներ կան, որոնք միևնոյն յարաբերութիւնն ունին ըստ Սահմանադրութեան Կ. Պոլսոյ հետ. միայն կրօնական գործոց մէջ Կաթողիկոսին հետ յարաբերութիւն ունին Կիլիկիոյ վիճակները և Կիլիկիոյ Կաթողիկոսն ալ Կ. Պոլսոյ Կրօն. ժողովին հետ, և Կ. Պոլսոյ Կրօն, ժողովն ալ Ս Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետին հետ: Եգիպտոսի հետ Երուսա-

ղեմոյ ունեցած յարաբերութեան խնդիրն է այս ալ. ես կը յիշեմ որ Պօլսոյ Պատրիարքի օրով եկեղեցական ժողով մը լուծած է այս խնդիրը. Եգիպտոսի Առաջնորդը Ժողովրդէն կընտրուի, Կ. Պոլսէն կը վաւերացուի, բայց կոնդակը Երուսաղէմայ Պատրիարքին կողմէն կերթայ հոն կը կարդացուի. ճիշդ այսպէս Կիլիկիոյ թեմերուն համար ալ Պատրիարքին կոնդակը չկարդացուիր հոն, այլ Կաթողիկոսին կոնդակը: Միայն կէտ մը կայ որ յատկապէս յիշուեցաւ այս Հրահանգին մէջ. եթէ Կիլիկիոյ գաւառին համար վարդապետ ձեռնադրել պէտք ըլլայ, Կաթողիկոսին դիմելու են. բայց եպիսկոպոս ձեռնադրել հարկ եղած ատեն՝ Կեդր. Վարչութեան գիտութեամբը պիտի դիմեն Կիլիկիոյ Կաթողիկոսին:

Այս դիտողութեանց վրայ ժողովս առաջարկեց Ս. Նախագահին, որ ինք իր ուզած ձեւը Ծրագիր մը բերէ. և եթէ չհամաձայնինք, տանինք խնդիրը Ընդհ. Ժողովին, վասն զի Կիլիկիոյ վիճակներն այլ ևս այսպէս թողուլն աղէկ հետեւանքներ չունենար:

Դ.

Քաղ. Ժողովոյ որոշման թուղթը պատուէր, քիչ մը ետքը Ժ. խնդրոյն, այն է Ս. Պատրիարք Հօր ամսականի խնդրոյն մէջ պիտի բացատրուի:

## Ե. ՄՈՒՔԱԹԱ ՀԱՒԱՔԵԼԸ

Քաղ. Ժողովոյ պաշտօնավարութեան ընկերէն Տնտեսական խորհուրդը ստէպ կը ծանուցանէր թէ՝ պէտք է որ Մուքաթա տուրքը Կեդր. սնտուկը թափի, եթէ ոչ սնտուկին եկամուտքը իր հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ:

Հին արձանագրութեանց դիմելով, այս Մուքաթայի խնդիրը միշտ Տնտես. խորհրդոյ և Ս. Պատրիարքի մէջ վէճի նիւթ եղած է. ինչպէս 1870ի Տնտես. խորհուրդը՝ որոյ ատենապետն էր Մէրեմ-Գուլի էֆ. իր հրաժարականովը մէկ տեղ համառօտ համարատուութիւն մ'ալ ըրած է, որոյ մէջ հետեւեալը կը կարդամք.

«Նաև Ս. Պատրիարք Հօր ձեռօք դեկտ. ամսոյ սկիզբէն 'ի վեր հաւաքեալ Մուքաթայից հասոյթն ալ կայ, որուն հաշիւը Տնտես. խորհուրդը չկրցաւ ընդունիլ մինչև իւր հրաժեշտի թուականը, 9 մարտ 1871:»

——

### Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ

5 հոկտեմբեր 1872

Ժողովը Տնտես. խորհրդոյ վերջին տեղեկագիրն ուշադրութեան առնելով որոշեց որ Մուքաթայի տրոց հին բաշխումն անփոփոխ պահուի, և անոր հաւաքման գործողութեան ձեռնարկէ Տնտեսական խորհուրդն՝ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր ազդեցութիւնն ու աջակցութիւնն ալ ստանալով: Նոյնպէս որոշեց Պատրիարքարանի մատակարարութեան և Սրբազան Պատրիարք Հօր մասնաւոր ծախուցը համար յատկացեալ տասն հազար ղշ. ի ամսականն անփոփոխ պահել և շարունակել, որով Պատրիարքարանի մատակարարութեան ծախուց համար Կեդր. սնտուկէն մինչև ցարդ տրուած և այսուհետև տրուելիք գումարները յիշեալ ամսականաց հաշուոյն պիտի անցնին, ինչպէս նաև Մուքաթայի հասոյթէն Ս. Պատրիարք Հօր ձեռօք գանձուած արդիւնքը: Հետեւապէս Տնտ. խորհուրդը հաւաքելի Մուքաթայի տրոց հին բաշխման համեմատ ստացագիրերն ըստ օրինի պատրաստելով՝ Ս. Պատրիարք Հօր միջոցաւ զանոնք պիտի գանձէ, կամ եթէ Ս. Պատրիարքն իբրև վճարեալ ընդունի նոյն ստացագիրերը, Նորին Սրբազնութեան հաշուոյն պիտի անցընէ:

——

Բայց Ս. Պատրիարք Հայրը ըստ նախկին սովորութեան իւրում ինք կը պատրաստէ դարձեալ ստացագիրերը, և ինք կը հաւաքէ. միայն ժամանակ ժամանակ հաշիւ տալով Տընտեսական խորհրդոյ. որոյ պատճառաւ բաւական գումար մը աւելի առած ըլլալը յայտնելով, Տնտես. խորհուրդը եկաւ անձամբ բողոքեց Քաղ. Ժողովոյ մարտ 29ի նիստին մէջ,

որոյ արձանագրութիւնը պիտի տեսնուի քիչ մը ետքը Ամսականի խնդրոյն մէջ :

## Զ· ՄՇՈՅ Ս· ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՑ ՊԱՐՏՔԸ

Քաղ· ժողովը քանիցս քննած է կեդր· սնտուկի պահանջքի ցուցակը, որոյ մէջ կը գտնուի Մշոյ Ս· Կարապետի վանուց քանի մը տարեկան Մուքաթայի պարտուց գումարը 33300 ղշ· ցվերջ ապրիլի ներկայ տարւոյս :

Ս· Պատրիարք Հայրը այս պարտուց վըրայ որ և է դիտողութիւն մ'ըրած չէր : Ժողովը մարտ 29ի նիստի մէջ որոշեց շրջաբերական մը հանել, և պարտք ունեցողներուն ղրկելով իրենց պարտուց վճարման մասին որոշ պատասխան ուզել : Դիւանատունն այս որոշումը յունիս 7ին կը գործադրէ · բայց Ս· Պատրիարք Հօր դիտողութեան վրայ Մշոյ 33300 ղշ·ին համար Մշոյ Ս· Կարապետի վանուց գրուելիք գիրը ետ կը մնայ, և ժողովին ալ չծանուցուիր, մինչև որ ընդօրինակութեան տումարին քննութենէն (ի 24 յուլիս) իմացուեցաւ :

## Է· ԲԱԼՈՒՑԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՆԴԻՐԸ

1872 Հոկտ· 19ի նիստի մէջ Բալուէն մասնաւորաց կողմէն հեռագիր մ'եկած էր, որով այժմեան առաջնորդէն դժգոհ ըլլալնին յայտնելով՝ նախկին առաջնորդին վերահաստատութիւնը կը խնդրէին : Ժողովը նկատելով որ առաջնորդ ուզելու և չուզելու խնդիրը Սահմանադրութեան համեմատ օրինաւորութեան ճամբով պէտք է ներկայացուի, մասնաւորաց հեռագրին կարևորութիւն չտուաւ և որոշեց անպէտ թղթոց կարգն անցնել :

Նոյն նիստի ատենագրութեան վաւերացման միջոցին՝ Ս· Պատրիարք Հայրը դիտողութիւն ըրաւ թէ ինչո՞ւ այդ հեռագիրը անպէտ թղթոց կարգն անցեր է, մինչդեռ ժողովուրդը այնչափ բողոքներ ըրաւ և կ'ընէ :

Նոյեմբեր 23ի նիստին մէջ դարձեալ Բալուի առաջնորդին 'ի նպաստ և ընդդէմ հանրագիրք եկած էին :

« Խառն ժողովն այս տեսակ հանրագրութեանց կարևորութիւն տալ և առաջնորդ մը «առանց քննութեան և դատաստանի իր պաշտօնէն» դադրեցնելը Սահմանադրութեան հակառակ համարելով, յիշեալ երկպառակութիւնը բառնալու միջոցը միայն տեղւոյն Գաւառական ընդհ· ժողովոյ կազմութիւնն ըլլալը նկատեց, և ըստ որում առաջնորդին երրորդ անգամ վերջին թղթատարով ազդարարագիր ղրկուած էր, որոշեց այս երրորդ ազդարարութեան արդեանց սպասել : »

1873 Ապրիլ 26ի նիստին մէջ հեռագիր զարնուեցաւ 'ի Բալու, և Սահմանադրութեան գործադրութիւնն ուր մնացած ըլլալը հարցուեցաւ :

Մայիս 10ի նիստին մէջ հեռագրով պատասխան եկաւ թէ թղթատարով պատասխանը կղրկուի,

Յունիս 7ի նիստին մէջ կարդացուեցաւ Բալուի առաջնորդին պատասխանագիրը, որով Գաւառական ժողովոյ ընտրութեան այսուհետև ձեռնարկելիքը կ'իմացնէր, առանց մինչև ցարդ ետ թողած ըլլալուն պատճառները ծանուցանելու .

« Որոշուեցաւ 15 օր ևս սպասել, և եթէ նոր տեղեկութիւն մը չգայ, պաշտօնէն հրաժարեալ ըլլալը ծանուցանել իրեն :

Յուլիս 3ի նիստին մէջ, « Խառն ժողովը նկատելով որ Բալուի առաջնորդ Բագուանեան Պետրոս վարդապետ հետզհետէ առինքն ղըրկուած հրահանգաց հակառակ չկրցաւ Սահմանադրութիւնը գործադրել իւր վիճակին մէջ, որոշեց պաշտօնէ դադրեցնել, Պայազիտի Խաչ Քիլիսէ վանքը երթալու պայմանաւ :

Ահաւասիկ յուլիս 4 թուականաւ առ Պետրոս վ· գրուած և ղրկուած պաշտօնագրին օրինակը :

Առ Պետրոս վարդապետ Բագուանեան
'ի Բալու

Արժանապատիւ Եղբայր 'ի Քրիստոս

Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառ-

ուրն ժողովը։ Նկատելով որ Ձեր պաշտօնն առժամայն չ'վարելով Ձեր դէմ ժողովրդեան կողմէ գանգատ և բողոքներ անպակաս եղած են. Նկատելով որ այլ ևս չ'ըլլալ կարողանալը գոհ ընել ժողովուրդն, միանգամայն և գիտակցութիւնն, որ քանիցս անգամ աղաչարեց Ձեզ Ազգային Սահմանադրութիւնը գործադրել, բայց չ'կրցեցաք. մինչդեռ ժողովուրդն ալ կը փափաքի անոր անյապաղ գործադրութեանը. այս նկատումներով որոշեց զՁեզ պաշտօնէ դադրեցնել և հրաւիրել որ բարեհաճիք շուտով 'ի Պոլսոյ հեռ Քիլիսէ վանքն երթալ բնակիլ։

Այս որոշումը հաղորդելով Ձեզ կաղաչարարեմք որ անմիջապէս Բալաթէն մեկնելով յիշեալ հեռ Քիլիսէ վանքն երթայք անյապաղ։

4 յուլիս 1873 (Ստորագրութիւն)

ի Պատրիարքարանի Հայոց ՊԱՏՐԻԱՐՔԻ

Կ. Պոլիս

Յուլիս 24ին երբ ընդօրինակութեանց տումարը քննուելով, այս նամակն երևան ելաւ, Դիւանապետ էֆէնտին պատասխանեց թէ՝ ըստ որոշման խառն ժողովոյ, նամակը գրել տուի և տարի Նորին Սրբազնութեան որ ստորագրէ, փոխել տուաւ նամակը և ըսաւ, «Ես Սահմանադրութիւնը չգործադրելուն համար առաջնորդ մը չեմ դադրեցըներ իր պաշտօնէն», (արձանագրեալ յ'31 յուլիսի)։

## Թ. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

### Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

### 2 դեկտեմբեր 1872

Գաւառական հարստահարութեանց տեղեկագիրը։

Թէպէտ և Նախորդ Մեծ եպարքոս Միտհաթ փաշային տրուելն որոշուած էր ու չէր տրուած իւր հրաժարումը վրայ հասնելուն համար, և վերապահուած էր իւր յաջորդին՝ այժմեան Մեծ եպարքոսին տալ, սակայն դեռ տրուած չըլլալով, այսօր նորէն որոշուեցաւ որ Ս. Պատրիարքն այլ ևս չյապաղի տանիլ դայն տեղեկագիր իւր ձեռօքը մատուցանել Մեծ եպարքոսին։

Եւ որովհետև մի քանի միոյ հրաժարեալ նախորդ երկու Մեծ եպարքոս Մահմուտ և Միտհաթ փաշաներուն ուրիշ ազգաց Պատրիարքներ գացած էին այցելութեան եւ մեր Ս. Պատրիարքը տակաւին չէր գացած, որոշուեցաւ որ անոնց ալ առանց ժամանակ կորուսանելու տեսութեան երթայ։

Նոյնպէս Ոստիկանութեան, Էվքաֆի տեսչութեան, Հասարակաց կրթութեան, եւ Եպարքոսի խորհրդականութեան Նորընտիր պաշտօնեայներուն ալ այցելութիւն տալ որոշուեցաւ։

Եւս և Ռուսիոյ և Գերմանիոյ դեսպանաց, որոց առաջնոյն անուան տօնախմբութիւնը մօտեցած էր և երկրորդը նոր իր պաշտօնին կոչուած էր։

Այս առթիւ որոշուեցաւ որ Տէրութեան գլխաւոր պաշտօնէից փոփոխութեանց ատեն այսպիսի այցելութիւններն ուշադրութեան առնուլին միշտ. ինչպէս նաև օտար տէրութեանց դեսպանաց անուանատօներուն, և ասոնց ամենուն ցանկը շինելը Գաբու քեահեասի էֆէնտիին յանձնուեցաւ, որպէս զի ըստ այնմ հարկ եղած այցելութեան ժամանակը և պէտքը յիշեցնելով Ս. Պատրիարք Հօր, առանց ժամանակի կորստեան կատարուի. և առանկով Պատրիարքարանն իր կղզիացեալ դիրքէն դուրս ելնելով՝ ամէն ատեն ուրիշ ազգաց հետ յարաբերութեան մէջ ըլլայ, և մանաւանդ Կառավարութեան պաշտօնէից հետ, որոնց հետ այս տեսակ յարաբերութիւնք խիստ օգտակար և կարևոր են։

### Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

### 7 դեկտեմբեր 1872

Քաղ. ժողովն ըստ որում նախորդ նիստով որոշած էր որ գաւառական հարստահարութեանց տեղեկագիրն՝ որոյ Մեծ եպարքոսին տրուելն այնքան յապաղած էր, այլ ևս ժամանակ չկորսնցնելով տրուի։

Ատենադպիր էֆ. յիշեցուց այս որոշումը և տեղեկագրին դեռ ևս տրուած չըլլալը. նոյնպէս որոշեալ հին և նոր նախարարաց տրուելիք

այցելութեանց ետ մնացած ըլլալը ։ Ժողովը մինչև մէկ շաբաթ սոյն այցելութիւնները լմնցընել խնդրեց Ս. Պատրիարքէն ։ Սակայն Նորին Սրբազնութիւնը մինչև մէկ շաբաթ անհնարին է ըսելով ամսուան մը գործ ըլլալը յայտնեց ։

— —

Երբ Բերայի գերեզմանատան և Պրուսայու խնդիրները ծանրացած էին յոյժ, Պատրիարքական փոխանորդ Հօր հրաւիրանօք Քաղ. Ժողովն արտաքոյ կարգի նիստ ընելու հրաւիրուեցաւ դեկտ. 19 ին ։ Ս. Պատրիարք Հայրն անձնական տկարութեան համար երկու երեք օրէ 'ի վեր Պատրիարքարանէն բացակայ էր ։

Նոյն նիստին մէջ Դիւանը այցելութեանց խնդրոյն վրայ հետևեալ յայտարարութիւնն ըրաւ ։

Փափազեան Ս. էֆ. Պաշտօնական յարաբերութիւններս լաւ վիճակի մէջ չէ . ասկէ առաջ քանի քանի անգամ խօսք անցած էր Ժողովին մէջ որ Ս. Պատրիարքը Բ. Դրան երևելի նախարարաց և նախկին Մեծ Եպարքոս Մահմուտ և Միտհատ փաշաներուն տեսութեան երթայ . բայց դեռ չգնաց, պատճառ ցուցնելով օդերուն գէշութիւնը և իւր տկարութիւնը . մինչև անգամ անցեալ օր մեր Քաբուքեահեասի էֆէնտիէն իմացայ որ Արզուման էֆէնտիէն լսեր է թէ Մահմուտ փաշան ըսեր է . « ես Հայերն այսչափ կը սիրեմ, ինչո՞ւ Պատրիարքն անգամ մը չեկաւ ինծի » ։ Իմ կարծիքս միանգամ ընդ միշտ այս եղած է . Պատրիարքը պէտք է այս յարաբերութիւնները լաւ վիճակի մէջ պահէ . ինք անձամբ պէտք է այցելութիւն տայ, ինչպէս Յունաց Պատրիարքը, որուն համար միշտ լրագրաց մէջ կը կարդանք . և հարկ չմնար փնտռելու Բ. Դրան ծանօթ ազգայիններ՝ որ երթան խօսին Պատրիարքին կողմէ, ինչպէս երբեմն կըլլար ։ Մեր բաղձանքը մասնաւորաց ազդեցութեան տեղ ազգային ազդեցութիւնը մտցընելն է, և ամէն ատեն պայծառ վիճակի տէր մասնաւորներ ո՞ւր կրնանք գտնել . բայց Պատրիարքը ամէն ատեն կայ, և ամէն ատեն Ազգն ունի զանի, որ դիրք և պաշտօնով անհամեմատ առաւելութիւններ ունի . և Ազգին ազդեցութիւնը պահելու համար Պատրիարքին յարաբերութիւնը պէտք է Բ. Դրան նախարարաց հետ, որ ըստ օրինի և ըստ պահանջման հարկին կատարուի ։ Այս յարաբերութիւնը չեմ գիտեր նախորդ Վարչութեան օրով ինչպէս էր, բայց մեր օրով աղէկ վիճակի մէջ չէ . և ասոր դարմանը մտածել պէտք է ։

Ժողովն առհասարակ ցաւ յայտնեց այս յարաբերութեանց ետ մնալուն վրայ, մինչդեռ 4–5 նիստ յառաջ յատկապէս որոշեալ և յանձնարարեալ էր Ս. Պատրիարք Հօր, և դեռ անգործադրելի մնացած ։

— —

Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ

19 փետրվար 1873

Դիւանը (Նըգուկեյ խնդրոյն առթիւ) յիշեցուց նորէն Պաշտօնական այցելութեանց խնդիրը, առարկելով թէ Րիզա փաշայ, Նըեմտից պաշտօնեայն և այլք որ պաշտօնի անցած են, դեռ այցելութիւն տրուած չէ անոնց . նոյնպէս դեսպանական այցելութիւնք ետ մնացած են ։

Ժողովն այս այցելութեանց ստիպողականութիւնն ընդունեց, և Ս. Պատրիարքն ալ խոստացաւ կատարել, արդէն Րիզա փաշային տալիք այցելութիւնը որոշուած է ըսելով ։

— —

Այցելութեանց խնդիրը այս վիճակին մէջ մնաց . յետոյ քանիցս գանգատներ ալ եղան ։

## Ժ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԱՄՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՔԻ ԽՆԴԻՐԸ

Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ

29 մարտ 1873

Դիտողութիւն Տնտես. խորհրդոյ 'ի վերայ ամսական պահանջից Ս. Պատրիարքին ։

Տնտես. խորհուրդն այսօր անձամբ ներկայանալու առթիւ Սրբազան Պատրիարքին և իւր մէջ Պատրիարքական ամսականաց հաշուոյ մասին ծագած անհամաձայնութեան վրայ ժո-

զօրայն ուշադրութիւնը հրաւիրելով խնդրեց որ պէտք եղած հրահանգն իրեն տրուի, որպէս զի ըստ այնմ կարող ըլլայ Ս. Պատրիարքին և Կեդր. սնտուկին մէջ եղած հաշիւները պատշաճապէս կարգադրել յառաջիկայ մայիս 1էն առաջ, որ սնտուկին հաշուական տարեգլուխն է: Իսկ անհամաձայնութեան կէտին գալով՝ յայտնեց թէ Տնտես. խորհուրդն ըստ նախորդ Վարչութեան որոշման թէ՛ մատակարարութեան և թէ՛ Նորին Սրբազնութեան հաշուոյն սնտուկէն տրուած և մուքաթաներէն իւր ձեռօք հաւաքած ստակներուն հաշիւը տեսնելով կը գտնէ որ մինչև ներկայ 73 տարւոյ փետրվարի վերջը՝ Նորին Սրբազնութիւնը 32961 ղշ. պարտական մնացած է սնտուկին. բայց Նորին Սրբազնութիւնն իւր գահակալութեան օրէն ամսականը տասնական հազար ղշ. հաշուել ուզելով կը պահանջէ տակաւին 51430 ղշ. և թէ յիշեալ 32961 ղշ. ի առաւելական տարբերութիւնն ի՞նչէն գոյացած է, այս մասին ալ Տնտես. խորհուրդը բացատրութիւն տալով յայտնեց թէ՝ որովհետև Ս. Պատրիարքը մէկ կողմէն Պատրիարքարանի մատակարարութեան ծախքը սնտուկին թողած է և այս կերպով սնտուկն ամսէ ամիս հինգ հազար ղշ. ծախք կընէ Նորին Սրբազնութեան հաշուոյն, միւս կողմէն տարեկան 90 հազար ղշ. ի մուքաթայի տուրքերն ալ իւր ստորագրութեամբը հաւաքելով, տարի գլուխ 30 հազար ղշ. աւելի ստակ անցուցած կըլլայ. և յաւելցնելով թէ Տնտես. խորհուրդը ըստ որոշման Քաղ. Ժողովոյ մուքաթայի տրոց հաւաքումն ինք ընելու համար, աւելի օրինաւորութիւն մը տալ ուզեր է և տպեալ տոմսակներ պատրաստեր է թէև, բայց Նորին Սրբազնութիւնը չէ ընդունած, այս խնդիրն ալ յատկապէս ուշադրութեան առնուիլը խնդրեց:

Այս խնդիրը բացուած միջոցին Ս. Պատրիարքն արդէն խորհրդարանէն դուրս ելած և իւր սենեակը գացած էր: Ժողովականներէն ոմանք դիտեցին թէ այս երկու խնդիրներն ի՞նչու այսչափ ուշ բերած են Տնտեսականք Քաղ. Ժողովին. և այս նիւթին վրայ բաւական խօսելէ յետոյ, որոշում մը չընելով, Նորին Սրբազնութեան ներկայութեան միջոցին պէտք եղած բացատրութիւնն իրմէն առնել և ըստ այնմ որոշում ընելու համար հարկ դատեց յառաջիկայ նիստին խնդրոց կարգն անցնել «խնդիր Ս. Պատրիարքի ամսականաց և մուքաթայի տրոց հաւաքման» անունով:

— —

## Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ

### 15 մայիս 1873

Պատրիարքական ամսականաց խնդիրը:

Տնտես. խորհուրդն այս խնդրոյն համար Քաղ. Ժողովէն հրահանգ խնդրած էր, որպէս զի սահմանադրական նոր տարւոյն առթիւ կարենայ զարժանն 'ի գործ դնել.

Տնտես. խորհուրդը Ծը. նիստին ներկայանալով հաշիւ մը ցուցըցած էր, որով մինչև ներկայ մայիս մէկ՝ ըստ ազգային Վարչութեան 32961 ղշ. պարտական է սնտուկին Ս. Պատրիարք Հայրը. և ըստ Ս. Պատրիարք Հօր 51430 ղշ. սնտուկն իրեն պարտական է. վասն զի Ս. Պատրիարք Հայրը իր գահակալութեան օրէն սկսեալ 10000 ղշ. ամսական կը պահանջէ: Նոյն նիստին Ս. Պատրիարքը ներկայ չէր, և խնդիրը կախ թողուեցաւ: Այժմ Տնտես. խորհուրդը մայիս 1 ի առթիւ կը հարցնէ թէ ի՞նչպէս պատրաստէ իր հաշուեցոյցն ու հաշուեկշիռը (պիլանճէն):

Ս. Պատրիարք. — Ես առջի օրէն իմ ամսականս 10 հազար ղշ. գիտեմ, և կը կարծէի թէ նախորդ Քաղ. Ժողովն ալ այնպէս որոշած է. արդէն 4 հարիւր լիրա պարտք դիզուած է իմ վրայ. պէտք է գիտնաք որ Պատրիարքի մը ծախքը սահմանի տակ չկրնար մտնալ. Եթէ միայն կերակուր ուտելու համար է, հինգ հազարն ալ շատ է. բայց հոս վանք մ'է, կերակուր ուտողներ շատ են. միայն Պատրիարքին վրայ բեռցնել չըլլար, իմ կերածս յայտնի է. ես շատ անգամ շաբաթը օր մ'ալ հոս չեմ գտնուիր: 10 հազարէն 5 հազարը մատակարարութեան երթալով կը մնայ ինծի 5 հազար, որուն մէջ զանազան ծախքեր ունիմ, կառքի, ձիերու, կառապանի ծախքերէն զատ զանազան կարգի ողորմութիւններ կան՝ որ կը տրուին իմ ձեռքովս. Եթէ արտօնութիւն կուտաք որ սնտուկէն տրուին այդ զանազան տեսակ ողորմութիւնները, ես 3 հազարով ալ կը բաւականանամ: Սնտուկը թող ընէ մատակարարութիւնն ալ: Միայն մէկ պատմութիւն մը բաւական է համոզել զձեզ. 1864ին Ռուսաստա-

նէն վերադարձիս Պարսկաստանի Սալմաստ քաղաքը հանդիպեցայ և քանի մը օր հիւր մնացի երևելի վաճառականի մը տունը, որ շատ սպասիւ ընելէ ետև Արծուի Վասպուրականի տպարանին համար ալ նպաստ տուաւ. յետ ժամանակի այս մարդ մեռնելով ընտանիքը շատ աղքատութեան մէջ կիյնան. մտածելով որ այն մարդը ժամանակաւ մեզի բարիքներ ըրած է, իւր որդիքն բռներ հոս դրկեր էին վկայականով մը մեզի յանձնելով որ պէտք եղած օգնութիւնն ընեմ: Ասանկ պարագաներու մէջ իմ սիրտս չկրնար դիմանալ:

Ատենապետ էֆ. — Տնտես. խորհուրդը կուզէ հասկնալ թէ ո՞ր թուականէն 10 հազար ղշ. պիտի քալեցնէ Սրբազան Հօր ամսականը: Նորին Սրբազնութիւնը կըսէ թէ առջի օրէն 10 ղշ. է. հարկ կըլլայ փնտռել Նախորդ. Քաղ. Ժողովոյ արձանագրութեան մէջ թէ 10 հազարին որոշումն ո՞ր թուականէն է. թէ որ իւր ըսածին պէս առջի օրէն 10 հազարի որոշում չէ եղած, դժուարին է այդ որոշումը կոխել անցնիլ. այն ատեն առջի որոշումը գործադրելու հրահանգ կը տրուի Տնտես. խորհրդին, և Սրբազան Հօր առաջարկութիւնն իբր նոր խնդիր մը՝ խնդրոց կարգ կըլլայ:

Քրիստոստուր էֆ. — Տնտես. խորհրդոյ պաշտօն վարած օրս Սրբազան Հօր ամսականը 5 հազար ղշ. գտայ Նախորդ. Քաղ. Ժողովէն որոշեալ: Մինչև մէկուկէս տարուան միջոց այսպէս քալած էր հաշուետումարներուն մէջ, երբ Սրբազան Հօր հետ հաշիւ տեսանք այն ատեն, 26 հազար այսչափ ղշ. աւել անցած էր իրեն, այդ աւելորդ գումարը ծախուց կարգն անցընելով հաշիւը գոցեցինք, և 71-72ի սահմանադրական Նոր տարւոյն առթիւ շինուած հաշուեկշռին մէջ Նախորդ. Քաղ. Ժողովոյ դիւանին խորհրդակցութեամբը 5 հազարին վրայ 5 հազար ևս յաւելցնելով՝ 8 հազար ղշի հանեցինք Սրբազան Հօր ամսականը: Բայց յաջորդ տարեգլխուն մօտ տեսանք որ դարձեալ աւելի ստակ անցուցեր է Սրբազանը, և բոլոր ծախքերը հաշիւ ընելով մատակարարութիւնն ալ 'ի միասին 10 հազար ղշ. ամսականի կարօտ ըլլալը նկատելով՝ խնդիրը Քաղ. Ժողովին ներկայացուցինք. և Ժողովն քանիցս անտես առնելով մեր առաջարկութիւնը, ժողովականք ոմանք մեզի առանձին հրահանգ կուտային առնոյն տեղը կապելու: Երբ Ժողովն անցեալ տարուան մայիս մէկը մօտեցած էր և հրաժարական պիտի տար, ստիպեցինք Քաղ. Ժողովոյ դիւանը՝ որ մեզի հրահանգ մը տայ, որպէս զի մայիս մէկի հաշուեցոյցը կարենանք առանց շփոթութեան և օրինաւորապէս պատրաստել: Այն ատենն էր որ Քաղ. Ժողովն իւր վերջին նիստին մէջ որոշեց Սրբազան Հօր ամսականը 1871 մայիս 1 էն սկսեալ 10 հազար ղշ. էն քալեցնել, և դիւանէն մեզի հրահանգ եկաւ, որով մենք ալ կրցինք մեր հաշուետումարները շտկել և մեր հաշուեցոյցը պատրաստել:

Ժողովը Նախորդ. Քաղ. Ժողովոյ արձանագրութեանցը դիմելով տեսաւ որ 70 օգոստոս 4 և 72 ապրիլ 28 նիստերուն մէջ եղած որոշումները Քրիստոստուր էֆ.ի ըսածը կը հաստատեն. ինչպէս,

4 օգոստոս 1870

Նիստ ԼԴ.

«Տնտեսական խորհրդականք ներկայանալով յայտնեցին թէ Կեդր. համարակալն իր պաշտօնէն հանուելով, իր պաշտօնը բաց մնացած է և պէտք է ուրիշ մը ընտրել: Ժողովը այս պաշտօնը կարևոր է թէ չէ մտածելէն ետև՝ կարևոր դատեց և Տնտեսական խորհրդին յանձնեց համարակալի մը ընտրութիւնը:

Սրբազան Պատրիարքը դիտեց որ չափաւոր ամսականաւ մէկը դրուի 400 էն մինչև 500 ղշ. ամսականաւ: Եւ իւր դիտողութիւնը յառաջ տանելով ըսաւ. «10 տարիէ 'ի վեր Ազգը Սահմանադրութեան սկզբունքը ընդունելով իրեն նպատակ դրեր է Ազգային գործոց բարեկարգութիւնը, դիւանատուն, համարակալ ևն. սահմաներ է. բայց ամենէն աւել անհրաժեշտ եղած բանը չէ մտածեր կարգի դրեր, այն է դրամը: Ես իմ օրովս չեմ ուզեր պարտք դիզել, ինչպէս իմ Նախորդներս դիզեր են աննախատեսութեամբ: Ազգ. պաշտօնատուն Ղալաթիա է այսուհետև, Պատրիարքը քանի մը վարդապետներով կը մնայ 'ի Պատրիարքարան, մատակարարութեան համար գումար մը կորոշուի, կառնեմ, ուրիշ բանի չեմ խառնուիր: Ժողովները, խորհուրդները բոլորն ալ Ղալաթիա պիտի ըլլան, ամեն մէկը շաբաթը մէկ

մէկ օր նիստ պիտի ընեն․ տեղական գործերը գաւառականէն զատուելով՝ տեղական Մասնաժողովոյն յանձնուած է ընդ նախագահութեամբ Սիմոն սրբազանին, գաւառական գործերն ալ նոյնպէս զատուելով Գաւառ․ Մասնաժողովոյն յանձնուած է ընդ նախագահութեամբ Եփրեմիա սրբազանին․ Գիւանատունն ալ իր բոլոր ճիւղերովը Ղալաթիա պիտի մնայ, և Ազգ․ պաշտօնատան վերաբերեալ ծախուց ես պատասխանատու չը պիտի ըլլամ։»

«Ժողովը Սրբազան Պատրիարքին դիտողութիւնները ընդունեց և որոշեց Ազգ․ պաշտօնատան փոխադրութիւնն 'ի Ղալաթիա․ և Տնտես․ խորհրդոյ հետ համաձայնութեամբ ամսական 5000 ղշ․ սահմանեց Սրբազան Պատրիարքին մատակարարութեան ծախուց համար, բաց 'ի իւր երթևեկութեան ծախքերէն, զորս դարձեալ սնտուկը պիտի հոգայ․ և Սրբազան Պատրիարքը որոշեալ 5000 ղշ․ը ամէն ամիս առնելով՝ ինք պիտի մատակարարէ զՊատրիարքարանն ։»

28 Ապրիլ 1872

Նիստ ԽԳ․

«Տնտեսական խորհուրդը Քաղ․ Ժողովոյ Ատենապետին ուղղեալ յայտագրով մը Ժողովոյն կը յայտնէ թէ նախորդ Տնտես․ խորհրդոյ կողմէ Ս․ Պատրիարք Հօր հաշւոյն Պատրիարքարանի մատակարարութեան ծախուց համար թէև ամսական 5000 ղշ․ի գումար մը սահմանուած էր․ սակայն Ն․ Սրբազնութեան երթևեկի, պարգևի, ողորմութեան և ուրիշ ծախուց համար գումար մը որոշուած չըլլալուն, անցեալ տարի Սրբազան Պատրիարքն ստիպուեր է որոշեալ ամսականէն 26615 ղշ․ի գումար մը աւելի առնուլ Կեդր․ սնտուկէն, ինչպէս որ նոյն տարւոյ ելևմուտից հաշուեցոյցը կը յայտնէ ։»

«Իսկ այս տարի Տնտես․ խորհուրդը Պատրիարքարանի հաշիւները գլուխ կապելու առթիւ տեսնելով որ Կեդր․ սնտուկէն Նորին Սրբազնութեան հաշւոյն եղած վճարումներն ամսական 10000 ղշ․ի գումարի մը կը հասնին, նկատելով որ իրաց այս վիճակը և Ս․ Պատրիարքին հետ ըրած բանակցութիւնը կը հաստատեն թէ որքան որ անցեալ տարւոյ վարչութեան հաշուեկշռին մէջ Ս․ Պատրիարքին 8000 ղշ․ ամսական նշանակուած էր, այսու ամենայնիւ Նորին Սրբազնութիւնը ամսական 10000 ղշ․ի գումարի մը կը կարօտի թէ՛ մատակարարութեան և թէ՛ ուրիշ ծախուց համար, և նկատելով որ Խորհրդոյն ձեռնհասութենէն վեր է այս մասին տումարական գործադրութիւն մ'ընել, հաշուական այս խնդիրն անորոշ և շփոթ չմնալու համար կառաջարկէ Քաղ․ Ժողովոյն որ հրահանգ մը տայ Տնտես․ խորհրդոյն հաշուական մօտահաս տարեգլխէն առաջ՝ պէտք եղած գործադրութիւնն ընելու ։

Ժողովը Ս․ Պատրիարք Հօր կարծիքն ալ համաձայն գտնելով Տնտես․ խորհրդոյ առաջարկութեան, որոշեց պատասխանել Խորհրդոյն որ անցեալ 1871 տարւոյ հաշուական տարեգլխէն սկսեալ Ս․ Պատրիարք Հօր ամսականը 10 հազար ղշ․ի վերածուի և այնպէս գործադրուի Կեդր․ տումարաց մէջ ։»

Ս․ Պատրիարք․ — Մի՛ կարծէք որ Պատրիարքն ալ միւս ազգային պաշտօնատարաց պէս սահմանի տակ է․ անիկա սահմանը կանցնի․ և ո՞վ է այդ սահմանն անցնողը, այն որ ձեր դուռը չգար, այլ ինծի կուգայ․ ասոր վրայ երկար խօսիլ աւելորդ կը համարիմ․ եթէ շատ պնդէք, ես կըսեմ թէ մինչև հիմա իմ առած ամսականներս հատուցեր եմ, ասոր անոր դիմելով հանգանակութիւն ըրեր եմ․ ես ամօթ կը համարիմ ասկէ աւելին խօսիլ ։

Ատենապետ էֆ․ — Սրբազան Հայր, մեք գիտենք որ Ձեր Սրբազնութիւնը կրնայ բացէն ժողովրդին դիմելով բան ժողվել․ խնդիրն ատոր վրայ չէ․ սնտուկը Պատրիարքական ամսական մը ունի տալու․ մեր նախորդներն ալ այդ ամսականն որոշեր են․ հիմայ Տնտ․ խորհուրդը հաշիւները պիտի գոցէ և կը հարցընէ թէ այդ ամսականին խնդիրն ի՞նչպէս պիտի ըլլայ․ այս հարցման պատասխան մը պէտք է տանք․ ես կը կարծեմ թէ մեր տալիք պատասխանն ինչ որ մեր նախորդին արձանագրութեանց մէջ գտնուի՝ այն պիտի ըլլայ․ արձանագրութիւններէն մեր իմացածը սա է որ առաջ 5 հազար ղրշ․ որոշուեր է մինչև մէկ ու կէս տարի միայն մատակարարութեան համար, և ուրիշ պատահական ծախքերը սնտուկին թողուեր են․ յետոյ 10 հազարի վերածուեր է թէ՛ մատակարարութիւն և թէ

բոլոր ծախքերն 'ի միասին հաշուելով :

Իսկ գալով Ձեր սրբազնութեան այն խօսքին թէ ստակի պէտք ունիք կամ թէ արտօնութիւն կուզէք որ ձեր տալիք ողորմութեան գումարները սնտուկէն վճարուին, այդ առաջային կը վերաբերի, զոր նկատողութեան առնելու համար կրնանք այժմէն խնդրոց կարգն անցընել :

Փիւրքճիպաշեան էֆ. — Եթէ մեր նախորդին որոշումները պիտի յարգենք, այսպէս պէտք է ըլլայ :

Քրիստոստուր էֆ. — Քանի որ սնտուկին հաշուետումարները նախորդ որոշման վրայ ընթացեր են, և առ Երեսփոխանական ժողովն համարատուութիւն ըլլալով, հաշուեցոյց և հաշուեկշիռ 'ի լոյս ամենայն ազգայնոց հրատարակուած են, անոնք չենք կրնար ետ դարձընել :

Ատենապետ էֆ. — Բայց Տնտես. խորհուրդըն ինչո՞ւ մեզի դիմեր է :

Փափազեան էֆ. — Առաջ 5 հազար ղշ. որոշուեր է Ս. Պատրիարք Հօր ամսականը իր հաճութեամբը, յետոյ 71 մայիս 1էն 10 հազարի վերածուեր է դարձեալ իւր հաճութեամբը. իսկ Սրբազան Հայրը այժմ կըսէ թէ դահակալութեան առջի օրէն 10 հազար է, և այն հաշուով 83 հազար ղշ. առնելիք կը ցուցնէ. որմէ 32 հազար ղշ. ի մի չափ առած է արդէն որոշեալ ամսականէն աւելի ստակ անցունելով, և մնացեալ 51 հազարը կը պահանջէ. Տնտես. խորհուրդը չկրնալով հին որոշումը ինքնին կոխել անցնիլ, հոս դիմեր է : Սրբազան Հօր պահանջքը դահակալութեան օրէն մինչև 71 մայիս 1 եղած անցեալ օրերուն տարբերութիւնն է, որ ըստ իս՝ իբրև հին առնելիքի խնդիր մի, և սնտուկին հին պարտուց կարգը դասելի, նկատողութեան առնուիլ պէտք է :

Ատենապետ էֆ. — Բայց Սրբազան Հայրն եթէ առնելիքս է կըսէ, հին արձանագրութեանց նայելով ատանկ առնելիք մը չենք տեսնար : Արձանագրութիւնք կը ցուցնեն որ սկիզբէն 5 հազար ղշ. ամսական որոշուած է, երթևեկութեան և պատահական ծախքերը սնտուկին վրայ մնալով, և յետոյ 10 հազար ղշ. որոշուած է այդ ամեն ծախքերն ալ իւր վրայ ըլլալով. իսկ Տնտես. խորհուրդը կըսէ թէ այս վերջին որոշման համեմատ Սրբազան Հայրն առնելիք չունենալէ զատ՝ 33 հազար ղշ. ի չափ ալ աւելի ստակ անցուցած է : Ուրիշ բան է թէ որ Սրբազան Հայրն ինչպէս պահ մ'առաջ ըսաւ, պարտք ըրած է և ստակի պէտք ունի. այս խնդիրը նոր է մեզի համար. ուստի ժողովին կը մնայ պէտք եղածն որոշել Տնտես. խորհրդոյն հրահանգ մը տալու համար, որպէս զի Պատրիարքական ամսականաց հաշիւը կարգադրէ և կարող ըլլայ սնտուկին հաշիւները գոցել ներկայ սահմանադրական տարեգլխոյն առթիւ :

Ժողովը վերջապէս որոշեց Տնտես. խորհրդոյն հրահանգ տալ որ նախորդ որոշմանց համեմատ մինչև ներկայ մայիս մէկ սնտուկին հաշիւը գոցէ, և հաշուեցոյցն ու յառաջիկայ տարւոյն հաշուեկշիռը պատրաստելով ժողովին հաղորդէ : Իսկ Ս. Պատրիարք Հօր պահանջքի և ամսականի խնդիրը խնդրոց կարգն անցընել որոշուեցաւ :

— —

### Ատենագրութիւն Քաղաքական Ժողովոյ

16 յունիս 1873

Գալով մնացորդ պարտուց խնդրոյն, Քրիստոստուր էֆ. յայտնեց թէ Տնտես. խորհրդոյ ներկայացուցած պարտուց և պահանջից հաշիւները մաքրուելու պէտք ունին. բայց Տնտեսական խորհուրդը չուզէր կամ չկրնար այս գործն իւր վրայ առնուլ. ուստի կամ յատուկ մասնաժողով մը դնելու է այդ հաշիւները մաքրելու համար, և կամ Ելևմտից հոգաբարձութիւնը կազմելու է որ Տնտեսականին գործը թեթևնայ և կարող ըլլայ այս գործն ալ նայիլ :

Ս. Պատրիարք. — Ելևմտական կազմուելովն ալ չլմննար այս պարտուց գործը. մինչև հիմա եկող գացող Տնտեսական կամ Ելևմտական խորհուրդները չեն կրցեր իրենց վրայ առնուլ և միշտ Քաղ. ժողովին վրայ է մնացեր : 5 բեռ պարտք ըսուածը ճշդիւ 3 բեռ է. այսպէս ըմբռնելով խորհեցէք այս պարտուց վճարմանը վրայ :

Ատենապետ Էֆ. — Աւելի առաջ խորհեցանք և հարկ դատեցինք որ օրինաւոր հաշուեցոյց մը ներկայանալէ ետև ըսելիքնիս որոշենք. իմ կարծիքս դարձեալ նոյնն է ինչ որ աւելի առաջ ըսեր էի. պէտք է որ հաշիւնիս մաքրենք և օրինաւոր հաշուեցոյց ու հաշուեկշիռ մը ունենանք առջևնիս. միջոցներ գտնել դժուարին չէ, այժմէն թէ և որոշելու ալ ըլլանք, չենք կրնար ստակ մը վճարել մինչև որ հաշիւները չմաքրուին:

Փափազեան Էֆ. — Այս պարտքը տալու համար 3 միջոց կայ ըստ իս. 1. ըստ առաջնոյն հանգանակութեան դիմել. 2. մեր հաշուեկշռին նայելով եւելցած հասոյթներէն մաս առ մաս վճարմամբ ջնջել, և 3. 7 բեռ առնելիքէն կարելի եղածին չափը հաւաքելով՝ գոյացած արդիւնքը պարտուց վճարման սահմանել: Ասոր վրայ երկար խորհելն աւելորդ է, մեր պահանջատեարց կողմէն ալ այնչափ ստիպողականութիւն չկայ առ այժմ. ստիպողներ եթէ կան, մէկը Զաքար աղան է, մէկն ալ Փափազեան Պետրոս աղա մը կայ՝ այն է: Նախ՝ Կեդր. սնտուկին հաշուեցոյցն ու հաշուեկշիռը գալու է, և երկրորդ՝ Ելևմտից հոգաբարձութիւնը գնելու ենք որ այս պարտուց վճարման խնդիրը կարգադրուի: Ասոր հետ դրամի կարօտ շատ պիտոյքներ ունինք. ժամանակն է որ Կեդր. սնտուկին վիճակը ուշադրութեան առնունք. դրամի կարօտ շատ մը բարեկարգութիւններ կան ըլլալիք: Ուսումնական խորհուրդը յայտնապէս կ'աղաղակէ թէ «դաստիարակութեան խնդիրը դրամի խնդիր է». բարւոքենք սնտուկին վիճակը թէ՛ անոր արդիւնքն աւելցնելով նորանոր միջոցներով, ինչպէս է վիճակահանութեան մը խնդիրը, զոր արդէն ուշադրութեան առած է ժողովը, և թէ՛ կարևոր խնայողութիւններով, որպէս զի գէթ այժմէն ամսական գումար մը կարենանք յատկացնել Ուս. խորհրդոյ տրամադրութեանը տակ:

Քրիստոստուր Էֆ. — Քաղ. ժողովոյ Ներքին կանոնագրին մէջ գործոց՝ այսինքն Տնտես. և Ուսում. գործոց բաժանում դրած էինք, բայց չգործադրեցինք այն ատեն Պօյաճեան և Հովուեան Էֆէնտիներուն անտեղի դիտողութեանց անսալով. անոր համար մնացին այս գործերը: Տրոց մասին միայն 75 ղշ. կը հաւաքուի, մինչդեռ օրինաւոր տուրք հաւաքելու միջոցներուն վրայ խորհիլ սկսելու էինք: Վարչութեան պարտքն է դրամ գալու միջոցներ գտնել, և թէ՝ եկած դրամը խնայողութեամբ գործածել և ազգօգուտ ձեռնարկութեանց յատկացնել: Մինչև ցարդ ձեռուընիս կապած հաշուեցոյցին և հաշուեկշռին գալուն կ'սպասենք. մայիս 1ը շատո՛նց անցաւ, և՞ դեռ պիտի գան Կեդր. սնտուկին հաշուեցոյցն ու հաշուեկշիռը:

Փափազեան Էֆ. — Տնտես. խորհուրդը նորէն գիր ղրկած է թէ Պատրիարքական ամսականաց խնդիրն որոշեցէք որ հաշուեցոյցս ու հաշուեկշիռս տամ:

Ատենապետ Էֆ. — Արդէն որոշեցինք Պատրիարքական ամսականաց խնդիրը և պատասխան գրեցինք Տնտես. խորհրդին. ինչո՞ւ նորէն որոշում կուզէ:

Ս. Պատրիարք. — Գրած պատասխաննիդ ես չտեսի. ըրած որոշումնիդ ես չեմ հասկըցած. այնպէս որոշում եղած չէր: Նախ պարտուց վճարումը որոշեցէք. մինչև այս չորոշէք, ուրիշ խնդրոյ անցնիլ չեմ թողուր. պարտք Հայոց ազգին է, Կեդր. սնտուկը պիտի վճարէ. որոշեցէք Տնտես. խորհրդին երթան պարտատէրները:

Ատենապետ Էֆ. — Հաշուեցոյց ու հաշուեկշիռ ուզեցինք Տնտես. խորհրդէն. եթէ դար՝ թէ Ձեր Սրբազնութեան խնդիրը՝ և թէ հին պարտքն ալ 'ի միասին պիտի նայէինք:

Ս. Պատրիարք. — Իմ խնդիրս պարտուց խնդրին հետ յարաբերութիւն չունի. Զաքար աղան ղրկեցէք Տնտես. խորհրդին, ամիսը գոնէ 30 լիրա թող տայ:

Քրիստոստուր Էֆ. — Ընդհանուր 'սկզբունքը չորոշած մասնաւորի չենք կրնար անցնիլ. Նախ՝ հաշուեցոյցն և հաշուեկշիռը չինուելու և հոս գալու են:

Ս. Պատրիարք. — Թող հաշուեկշիռն ալ մէկ կողմէն չինուելու վրայ ըլլայ:

Ճիլաճեան Էֆ. — Տնտես. խորհուրդը կը փախչի թէ որ հին պարտքերն անոր ղրկենք. իսկ թէ որ տարին գումար մը աւելցնենք և

անկէ առէք ըսենք, այդ կըլլայ. առանց այս ցուցնելու չենք կրնար։

Առենեակեա Էֆ. — Տնօրէն. խորհուրդը հաշուեցոյց տալու համար վերոյին գրեր է թէ Պատրիարքական ամսականաց խնդիրն որոշեցէք։ Մենք որոշեցինք ու գրեցինք պատասխանը, և Սրբազան Հօր խնդիրն եարի թողուցինք։ Բայց Սրբազան Հայրը կըսէ թէ մեր թուղթը վար դրեր ու Տնօրէն. խորհրդին չէ հաղորդեր, որոշումնիդ չհասկցայ ըսելով։ Այս պարագային մէջ առանց օրինաւոր հաշուեցոյց և հաշուեկշիռ ունենալու չենք կրնար պարտք տալ, ոչ ալ Ջաքար աղային և ուրիշներուն կրնանք պատասխան տալ. Տնօրէն. խորհուրդը պատասխան կուզէ և պէտք է պատասխան մը տալ. բայց Սրբազան Հայրը թող հաճի բացատրել թէ ինչո՞ւ արդէն դրած պատասխաննիս եա թողուց և այս գործը կայնեցուց։

Ս. Պատրիարք. — Դիւանապետը թող յիշեցընէ ինչ էր դրուած որոշումը։

Դիւանապետն յայտնեց թէ ժողովը որոշած էր Ս. Պատրիարք Հօր ամսականաց խնդրոյն վրայ գրել Տնօրէն. խորհրդին, որ մինչև ներկայ մայիս 1, հաշիւներն նախորդ որոշմանց համաձայն գոցէ առանց նոր փոփոխութեան, և հաշուեցոյցն ու հաշուեկշիռը զրկէ. իսկ Սրբազան Հօր պահանջքն իբր նոր խնդիր որոշած էր խնդրոյ կարգն անցընել։

Ս. Պատրիարք. — Ահա այդ կէտն էր որ չէի կրնար ընդունիլ, այդ կը նշանակէ զիս պարտապան հանել աշխարհի առջև. առանց ժողովին հետ խրատախոհ ըլլալու, այդպիսի որոշում մը չեմ կրնար ընդունիլ. ժողովն իբրև վարձկան ծառայի մը հետ վարուիլ կուզէ Պատրիարքին հետ. այդ չըլլար. Սահմանադրութիւնը կըսէ թէ Պատրիարքն ամսական պիտի ունենայ, բայց չափն ինծի համար անկարելի է, չափի մէջ չեմ կրնար մնալ. ինծմէ առաջ զանազան Պատրիարքներ եկեր են, ամենն ալ տասն հազարէն պակաս չեն առած. պատճառն ինչ է որ իմ օրովս 5 հազար կորուսի. թէև 'ի սկզբան 5 հազար որոշուեր է, այնչափ պէտք է եղեր և մեծահանձնութիւն ըրեր չեմ խօսեր. սակայն երբ այդ 5 հազարը չբաւելով՝ բաց մնացեր է, դուք ալ մեծահանձնաբար վարուելով ընդունելու էիք. երբ չըրիք զայս, ես ալ հաւանեցայ թէ առջի օրէն 10 հազար ըլլայ։ Կարճ խօսքով. չեմ ուզեր հաշիւս այնպէս թողեցնել և հրատարակել տալ որ աս ու ան քաշքշեն ու ըսեն թէ Պատրիարքըն ասակ անցուցեր է իր վրայ։

Հալաճեան Էֆ. — Վեհանձնութեան վերաբերեալ խօսքն իմ մասիս չեմ ընդունիր. մէկ մարդ մը իր քսակին համար կրնայ վեհանձն ըլլալ, բայց հասարակաց գանձուն համար վեհանձն ըլլալը «խայինութիւն» է. ես չեմ ընդունիր, և գիտեմ որ բոլոր ժողովականք ալ չեն ընդունիր. այս դիտողութիւնն կը խնդրեմ որ արձանագրուի. խնդիրը աս կէտին մէջ ամփոփուած է թէ, հիմակուան ըրած դիտողութիւննիդ այն ատենուան ժողովին ընելու էիք, երբ Ձեր ամսականը անոր սկզբնաւորութեան ժամանակը կ'որոշէր։

Ս. Պատրիարք. — Պատրիարքին հետ այդպէս չկրնար վարուիլ ժողովը. բողոքեցէք Ընդհ. ժողովին։

Առենեակեա Էֆ. — Թէ և Ձեր Սրբազնութեան ամսականն սկիզբէն նախորդ Քաղ. ժողովի օրով 5 հազար դչ. որոշուեր է, բայց մէկ ու կէս տարիէն ետև հաշիւ տեսնելով՝ Ձեր ամսականէն աւելի 24 հազար դչ. ի չափ ծախք ըրած ըլլալնուդ համար այդ աւելորդ գումարն ընդհանուր ծախուց կարգն անցուցեր են, և անկէ ետքն 8 հազարի և հուսկ յետոյ 10 հազարի հասուցեր են ամսականնիդ։ Հիմա դուք դժգոհութիւն կը յայտնէք և առջի օրուընէ կուզէք 10 հազար դչ. էն հաշուել։ Սակայն ժողովը այս մասին արձանագրութեանց դիմելով կը տեսնէ որ Ձեր Սրբազնութիւնը նախորդ ժողովին օրով դիտողութիւն մը չէ ըրած. եթէ վեհանձնութիւն ընել հարկ էր կըսէք, չէինք կրնար, վասն զի մեր նախորդներն ալ չեն ըրեր, մանաւանդ որ ժողովը սահմանադրական օրէնքի մը տակ է։ Կուզենք հասկնալ թէ Սրբազնութիւնդ իբրև օրէնք մեր վրայ պա՞րտք կը դնէք զայդ, թէ ոչ՝ ծախք մըն է ըրեր եմ, բաց մնացեր է, պէտք եղածն ըրէք ըսել կուզէք։ Մենք ալ այդ մտօք ըսած էինք որ հաշիւները գոցուին, հաշուեցոյցը հոս գայ, որպէս զի պէտք եղածը նայինք որոշենք։

Կրճիկեան Էֆ. — Հաշուեցոյցը հրատարա-

կութեան տրուելով պիտի տեսնուի ըսաւ Ս. Պատրիարքը թէ իր վրայ ելել սաստ է անցեր . ապէ կը խորշի . հաշուեցոյցը պիտի հըրատարակուի՞ ։

Ստեփանեան էֆ. — Առանց ժողովին որոշման ինչպէս կրնայ հրատարակուիլ ։

Երճիկեան էֆ. — Կրնայ ըլլալ որ Տնտես. խորհուրդն օրինակը հրատարակէ . ուստի եթէ ժողովս կուզէ իմաց տրուի որ չհրատարակէ , կասկածի տեղի չմնար ։

Այս խորհրդածութեանց վրայ որոշուեցաւ միւսօրին գրել Տնտես. խորհրդին , որ Սրբազան Պատրիարքին առաջարկած խնդիրն ըստ նախորդ որոշմանց կարգադրելով հաշիւները գոցէ և հաշուեցոյցը ու հաշուեկշիռն անյապաղ ներկայացնէ , առանց հրատարակութեան տալոյ ։

Ս. Պատրիարք. — Դարձեալ միեւնոյն որոշումը կընէք , չըլլար ։

Ստեփանեան էֆ. — Վերջացնենք այս խընդիրը . Ձեր Սրբազնութիւնը ըսաւ որ հաշիւները չհրատարակուին , մեք ալ ընդունեցինք . և պիտի գրուի Տնտես. խորհրդին որ հրատարակութիւն չըլլայ . բայց առջի որոշումն է որ պիտի գրենք դարձեալ . մեր առջի գրած թուղթը լսեցինք որ պատռեր էք . ասիկա ոչ նուազ անպատուութիւն է մեզ , չէ թէ անձնականնուս , այլ Ազգին կը վերաբերի այս անպատուութիւնը . միթէ նորէն պիտի պատռէ՞ք մեր գրելիք թուղթը ։

Ս. Պատրիարք. — Ո՛չ , ո՛չ , դարձեալ կըսեմ որ առջի որոշումը չհասկընալով և կարծելով որ բոլորովին մերժուած է իմ պահանջմունքս , անոր համար պատռեցի նոյն թուղթը ։

## Ը. ԳԱՏԸԳԻՒՂԻ ԹԱՂ. ԽՆԴԻՐԸ(1)

## ԵՒ

## ԺԱ. ԱՆԱՐԳԱՆՔ

Յունիս 2 թուականաւ յիշեալ Թաղ. խորհըրդոյն անդամ Պէյլէրեան Եղիա էֆ.ին հըրաժարագիրը յունիս 7ի նիստին մէջ եկաւ , որուն մէջ ներփակեալ էր առ ատենապետն յիշեալ խորհրդոյն բողոքախառն հրաժարագիր մ'ալ ։

Թաղ. ժողովն այդ հրաժարականը պատճառաբանութեան տակ տեսնելով չընդունեց և որոշեց բացատրութիւն ուզել Գատըգիւղի Թաղ. խորհրդոյ ատենապետէն ։

Յունիս 16ի նիստին մէջ Գատըգիւղի Թաղական խորհրդէն յունիս 13 թուականաւ նամակ մ'եկաւ , որ կը ծանուցանէր 3 անձանց հրաժարումը , հաշուական խնդիրներ ըլլալը Տնտես. խորհրդոյ միջամտելը , և 8 անձէ ցանկ մը կը ներկայացնէր , որ անոր մէջէն 4 անձ ընտրէ Թաղ. ժողովը առժամանակեայ խորհրդականութեան ։

Ժողովը նկատելով որ իր գիտցածը միայն մէկ անձի հրաժարականն է , և անոր համար ալ բացատրութիւն ուզուած և դեռ չէր եկած , նկատելով որ միւս երկուքին հրաժարականները նոր կ'իմանայ , և իրեն եկած չեն . որոշեց նախորդ որոշման համաձայն բացատրութիւնը և երկու հրաժարելոց ալ հրաժարագրերն ուզել , « իսկ մինչև այս տեղեկութեանց առնուիլը ժողովն որոշեց թէ հարկ չկայ առժամանակեայ նոր խորհրդականներ դնել , պէտք է որ մնացեալ խորհրդականք շարունակեն իրենց պաշտօնը մինչև 'ի նոր տընօրէնութիւն ։ »

Յուլիս 7ի նիստին մէջ Տնտես. խորհըրդոյ կողմէն տեղեկագիր մը ներկայացաւ , որով կը բողոքէր Պէյլէրեան էֆ.ին դէմ , որ թաղականութենէ հրաժարելով , հաշիւը տուեր է , բայց 15 հազար ղշ.ի մօտ գումարը չէ տուեր , և պէտք եղած տնօրէնութիւնը կը խնդրէր ։

« Տնտեսականին այս բողոքն և յիշեալ խընդրոյն վրայ այս դարձուածքները առիթ առին Թաղ. ժողովոյն հետազօտելու Պէյլէրեան էֆ.ի և իր ընկերաց հրաժարման պատճառներն , որոնց վրայ ասկէ առաջ Թաղ. խորհրդէն ե-

(1) Ը. խնդիրը՝ այն է Գատըգիւղի Թաղ. խնդիրը և անարգանաց խնդիրը ատենագրութեանց մէջ ծորդեալ են իրարու . ինչպէս պիտի տեսնուի ։

կած նամակ մը միայն հրաժարեալնին յայտնած էր, բայց պատճառը չէր ծանուցած, և ժողովն ալ ոչ Պէյլէրեան էֆ.ի և ոչ միւս երկուց հրաժարականը չէր ընդունած, որ Տնտես. խորհուրդն իրաւունք ունենար բողոքելու :»

«Ուստի ըստ որում ասկէ առաջ Պէյլէրեան էֆ.ի բողոքախառն հրաժարագրին վրայ Թաղ. խորհրդոյ ատենապետէն բացատրութիւն ուզել որոշուած էր, և այդ բացատրութիւնն ալ ցարդ չէր եկած, հետևաբար Դիւանապետ էֆ.ին հարցուեցաւ. Նա պատասխանեց թէ Պէյլէրեան էֆ. էն եկած և առ Գատըգիւղի Ատենապետն ուղղեալ գիրը իր ձեռքը չէ անցած, և վերջէն հարցնելով տեղեկացեր է Ս. Պատրիարքէն թէ, ինք այդ գիրն իր տեղը ղրկեր է :»

«Այս պատասխանին վրայ միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ Պէյլէրեան էֆ. և իւր երկու ընկերները հրաւիրել յաջորդ նիստին, իրենց հրաժարման մասին բացատրութիւն առնելու համար :»

— —

Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

14 յուլիս 1873

Նախընթաց նստին որոշուած հրաւէրին համաձայն ներկայացան այսօր Եղիա՛ Պէյլէրեան, Յովհաննէս Ղօնչէկիւլեան և Մինաս Գրիգորեան էֆէնտիները : Ասոնք միաձայն բացատրեցին իրենց հրաժարման պատճառները, որք են Թաղ. խորհրդականաց ոմանց մէջ եղած ապօրինութիւնք, Ատենապետին ամիսներով չգալ չերթալը և գործերն երեսի վրայ ձգելը : Այս բացատրութենէն հետևեցաւ թէ ասոնք կերպիւ մը խորհրդոյն Ատենապետը կամբաստանեն, իրենց հրաժարականին պատճառը միմիայն Ատենապետին ապօրինի վարմունքն ըլլալը յայտարարելով :

Ս. Պատրիարք. — Ուրեմն միւսներն ալ հոս բերելու է որ լաւ քննուի այս խնդիրը :

Պէյլէրեան էֆ. խստիւ բողոքեց խորհրդականաց ոմանց իրեն դէմ հրատարակել տուած անպատիւ յօդուածոց դէմ, և թէ յանիրաւի զինքն Տնտես. խորհրդին ամբաստաներ և բանկալի հաշուոց քննութիւն պահանջեր են, և անպատուութիւնը մինչև 'ի ծայրն հասուցանելու համար բանկալէն գոյացած պատրաստ հասոյթը Տնտես. խորհրդոյ միջոցաւ իրմէն առնել ուզեր են, մինչդեռ ինքը պատրաստ էր եթէ Թաղ. խորհուրդն ամբողջութիւն գտնէ բանկալին հաշիւներն ալ հասոյթն ալ խորհրդին ամբողջութեան յանձնելու : Այսու ամենայնիւ երբ Տնտես. խորհուրդը գացեր հաշիւ ուզեր է, իր հաշիւը տուեր է, և որովհետև Ատենապետէն 6480 ղշ. պահանջ ունի բանկալը, ասի ուզեցի ըսաւ և չտուաւ : Տնտես. խորհուրդն ալ զիմմէմ գրել տուեր է նոյն գումարն Ատենապետին վրայ : Այսպէս հաշիւը տալով՝ մնացած ստակը եկեղեցւոյն մէջ պահուած է. և ահա բանալին ըսաւ, (և ուզեց ժողովին յանձնել. բայց ժողովն իրեն դարձեալ յանձնեց) : Անոնք այնպէս հրատարակել տալ կուզեն, որպէս թէ զիմմէթս փարայ անցուցեր եմ. չեմ ընդունիր այդ խօսքերը : (Ու յաւելցուց) «Թաղին վարժարանին շինութեան համար իմ հանգանակութեան բաժինս տալէս զատ և իմ բարեկամ վաճառականներէ ալ քանի մը հարիւր լիրա նպաստ հաւաքելէս զատ 100 լիրա ալ նոյն շինութեան ծախուց ստակ անցուցեր եմ իմ քսակէս. այսու ամենայնիւ բանկալի պատրաստ հասոյթն այս առնելիքիս ալ չեմ սեպած և եկեղեցւոյն մէջ պահած եմ. Թող Ատենապետն ալ իր զիմմէթը վճարէ բանկալին. ինչո՞ւ չվճարէր :»

Ժողովը սոյն բացատրութեանց վրայ նկատելով որ ասոնց հրաժարականը իրենց մէջ ծագած անհամաձայնութենէն յառաջ եկած է, անընդունելի դատեց հրաժարականնին. և Թաղականաց մէջ եղած անհամաձայնութեան վախճան տալու համար միաբան հաւանութեամբ որոշեց միւս կողմն ալ հրաւիրել յաջորդ նստին, և դէմ առ դէմ խօսեցնելով անհամաձայնութեան վերջ տալ :

— —

Ատենագրութիւն Քաղաքական ժողովոյ

21 յուլիս 1873

Նախորդ նստի որոշման համեմատ Թաղ. խորհրդոյ երկու կողմն ալ այսօր հրաւիրուած էին իրենց մէջ եղած անհամաձայնութեան վերջ մը տրուելու համար :

Թէ և մէկ կողմէն Պէյլէրեան էֆ. և իր երկու ընկերակիցները ներկայացեր էին, բայց միւս կողմէն միայն Հալէնց էֆ. ներկայացած էր. և ժողովոյն հրաւիրանաց դէմ պատասխանագիր մը ղրկած էին, որ կարդացուեցաւ։

Ժողովը նկատելով որ Հարէնց էֆ.ի ստորագրութիւնն ալ կայ այս բողոքին ներքև, հարցուց թէ այդ ստորագրութիւնն իրն է, և թէ ինքը բողոքելո՞ւ համար եկած է արդեօք։ — Ստորագրութիւնն իմս է, բայց պարունակութենէն լաւ տեղեակ չեմ, ըսաւ, որովհետև բողոքելու մտօք գրուած չպիտի ըլլար. և ես բողոքելու կողմը չեմ, այլ մէջերնիս համաձայնութիւն և խաղաղութիւն հաստատուիլը կուզեմ։

Ժողովն անընդունելի դատեց այդ բողոքագիրը, որովհետև տեսաւ որ զայն ստորագրող մէկ անդամն ալ կը հերքէր անոր պարունակութիւնը, և խորհրդոյն մեծագոյն մասը, այսինքն 6 խորհրդականներէն 4ը, փոքրագոյն մասին ըրած բողոքը չընդունելով միացեր էին իրենց մէջ համաձայնութիւն հաստատելու համար։

Դիւանը խնդրոյն լուսաբանութեանը համար հրաւիրեց զՊէյլէրեան էֆ. անհամաձայնութեան ծագման պարագաները վերստին բացատրել։

Պէյլէրեան էֆ. — Առաջ ստակի կամ հաշուոյ խնդիր չկար մեր մէջ, երբ ես ատենապետին բռնած ընթացքին համար բողոքելով հրաժարել ստիպուեցայ։ Նոյնպէս երկու ընկերներս ալ հրաժարեցան։ Անմիջապէս մեր հրաժարման շաբթուն ատենապետը քէահեային միջոցաւ չուկան խապար կընէ որ հաշիւս տամ. պատասխան ղրկեցի թէ խորհուրդը թող կազմուի որ հաշիւ տամ, և թէ ատենապետ էֆէնտին բանկային հետ հաշիւ մը ունի 6 հազար այսչափ ղշ.ի, թող ինքն ալ իր հաշիւը մաքրէ և պարտքը հատուցանէ։ Ասոր վրայ Տնտես. խորհրդէն նամակ մը կուգայ ինծի, ծանուցանող թէ մենք պիտի գանք, հաշիւներդ բերես մեզի տաս։ Ես կարծելով թէ Վարչութեան հրամանաւն է այդ համարատուութեան հրաւէրը, չմերժեցի, գացի անձամբ խորհրդարանը և օրինաւորապէս հաշիւս ներկայացուցի. ուզեցին որ պատրաստ հասոյթն ալ անմիջապէս յանձնեմ. չէ ըսի. որովհետև 6 հազար այսքան ղշ.ի գիմէմ մը կայ ատենապետին վրայ, պէտք է որ նա ալ իր հաշիւը մաքրէ, և խորհուրդն իր ամբողջութիւնը գտնալէ ետև անոր պիտի յանձնեմ ամբողջ ստակը։ Գալով ատենապետին վրայ եղած գիմէմին, այդ գումարին մէջէն 3000 ղշ.ը իրենց ընտանիքէն խոստացեալ նուէր մ'է, որուն համար եկեղեցւոյն մէջ յատուկ ծանուցում ընել. տուած ըլլալով, բանկային հասութից կարգը նշանակուած էր. բայց ետքը դիտողութիւն ըրած էր ատենապետն ըսելով թէ պայմանի տակ է, ընկերներս ալ պիտի մէյմէկ նուէր ընէին. մենք ալ պատասխանեցինք թէ ատանկ պայման մը չէ եղած. Հարէ՛նց էֆ. դուք ալ գիտէք, եղա՞ւ մի. — ո՛չ. — յետոյ ատենապետն ելաւ թէ հօրս վագըֆն է այս եկեղեցին։ Ես ալ պատասխանեցի թէ ինչո՞ւ եկեղեցին այնքան ստակէն ելաւ թէ որ ձեր հօրենական վագըֆն էր այդ եկեղեցին։ Այս պատճառներով չուզեցի պատրաստ ստակը յանձնել իրենց, որովհետև միտքընին պարզապէս ինծի անվստահութիւն ցուցընել էր։ Ես թէպէտ և նոր վարժարանին շինութեան համար հանգանակութեան բաժինէս զատ 100 լիրա ալ ստակ անցուցեր եմ, այսու ամենայնիւ ինչպէս անցեալ օր ըսի ժողովոյդ, դարձեալ կը յայտարարեմ թէ այդ պատրաստ հասոյթն անոր տեղ ալ չեմ բռներ. բայց նաև չեմ ընդունիր որ պատուոյս դէմ այդպիսի խօսքեր և հրատարակութիւններ ըլլան։

Ժողովն այս պատմուածներուն ստուգութեանը համար Հարէնց էֆ.ի վկայութիւնն ալ ընդունեց. և հաստատեց թէ Պէյլէրեան էֆ.ի վրայ պակասութիւն մը չըլլալն անցեալ շաբթու ալ այս եղած խօսքերուն ստուգելով՝ հրաժարականնին չէր ընդունուած և առաջարկուած էր որ երթան պաշտօննին շարունակեն։ Իսկ հիմա Հարէնց էֆ. ալ ներկայ է. ըսել է Թաղ. խորհրդոյ մեծ մասը, այսինքն 6 խորհրդականներէն 4ը կը համաձայնին բաց 'ի մնացեալ 2էն, որ այսօր չեն եկած. ուստի նորէն խնդրեց ժողովը որ խորհուրդն իր մեծամասնութեան տրամադրութեան ներքև առնու այդ ստակի հաշիւ և այլ ամեն խնդիրները. քանի որ Պէյլէրեան էֆ. հաշիւը տուած

է արդէն , և պատրաստ սամին ալ օրինաւորապէս յանձնելու պատրաստ եմ կըսէ ։

Պէյլէրեան էֆ. դիտել տալու թէ քանի որ Թաղականներէն 2ը չեն եկած , և նամակ մը գրելով՝ զինքը դատապարտել կանուանեն , որոյ դէմ ինքը կը բողոքէ սաստկապէս , և քանի որ Ժողովը կորոշէ և կառաջարկէ որ երթայ իր պաշտօնը շարունակէ , ինչպէս կըրնայ վստահիլ անոնց վրայ և երթալ իր պաշտօնավարութիւնը շարունակել . գուցէ անոնք իրեն դէմ նորէն անարգութիւն մը ընեն և զինքը պատճառ բռնեն գալիք հետևութեանցը . ուստի առաջարկեց որ ժողովականներէն քանի մի հոգի անձամբ խորհրդարանը գալով իրենց ներկայութեանը պէտք եղածն 'ի գործ դնեն անկարգութիւն մը չպատահելու համար ։

Ժողովն որոշեց նախ պաշտօնական գրերով այս խնդրոյն կարգադրութեան արդիւնքը ծանուցանել , նամակ մը հրաժարեալ խորհրդականաց գրել իրենց հրաժարականնին չընդունուած ըլլալը և պաշտօննին շարունակելու պարտաւորութիւննին ծանուցանելով . նամակ մ'ալ Թաղ . խորհրդոյ ատենապետին գրել . նոյնպէս Տնտես . խորհրդոյ ալ ծանուցանել՝ հանդերձ դիտողութեամբ թէ Քաղ . Ժողովոյ դիւանին վրայ դանուած այս խնդրին մէջ առանց գիտութեան Քաղ . Ժողովոյ միջամտած ըլլալով օրինաւորութեան սահմանէն դուրս ելած է ։ Նաև պաշտօնական ծանուցում մը հրատարակել 'ի կողմանէ Ժողովոյն , յայտարարելով Պէյլէրեան էֆ. ի մասին եղած տարաձայնութեան անտեղի ըլլալը ։ Ժողովը խոստացաւ որ այն պաշտօնական ծանուցմանէն ետև յաջորդ կիրակին վարդապետ մը ղրկուի հոն Թաղ . խորհուրդը գումարելու և խաղաղութեամբ իրենց պաշտօնին մէջ վերահաստատելու համար .

— —

Ս . Պատրիարք Հայրը այս վերջին նիստին ներկայ չէր . և ապսպրեր է դիւանապետին որ այդ նիստին որոշումները չի գործադրէ ։

— —

Հոս միջանկեալ պատմութիւն մը կայ ուշադրութեան արժանի ։

Թաղ . խորհուրդը (յիշելու է որ Պէյլէրեան էֆ. ի հրաժարագիրը յունիս 7 ի Քաղ . Ժողովոյ նիստին մէջ եկած է) նամակ մը գրեր է 'ու Քաղ . Ժողովն , որ է այս ,

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր
Նախագահ Ազգ. Վարչ. Քաղ . Ժողովոյ.

Խորհրդոյս անդամներէն Յովհաննէս էֆէնտի Կօնչէկիւլեան , Եղիա էֆէնտի Պէյլէրեան և Մինաս էֆէնտի . . . . . հրաժարած ըլլալով , Պէյլէրեանի քով եղած դրամական հաշիւը ուրչափ որ ըստ օրինի պահանջեցինք որ խորհրդոյս ներկայացնէ , բայց նա այլ և այլ պատրուակներով հաշիւը խորհրդոյս յանձնելէ խոյս տալուն ՝ պարտաւորեցանք ծանուցանել Ձեր Բարձր Սրբազնութեան , որպէս զի շնորհ ընէք հրամայել , որ Տնտեսական խորհրդէն երկու հաշուագէտ անդամք յառաջիկայ կիւրակէ օր յունիս 10 ին Ս. Եկեղեցւոյ խորհրդարանը հրամայեն , այն հաշիւները առնելով խորհրդոյս յանձնելու ։

Ըստ այսմ կը ծանուցանեմք նաև որ գիւղիս մէջ նոր շինուած վարժարանին հաշիւը ես մինչև ցայսօր խորհրդոյս ներկայացած չէ , և վարժարանին շինութեան Հոգաբարձու կարգուած անձերը բոլորովին անփոյթ մնալով՝ շէնքին մէջի պակասները լրացնելու հոգ չեն տանիր . մինչդեռ իրենց պատճառաւ ցուցած հանգանակութեանց գումարը ձեռքերնին հասած է , այս մասին թէև մեր կողմանէ հարկ եղածը անօրինելու կը ջանամք , բայց և այնպէս Ձեր Բարձր Սրբազնութեան և Վարչութեան հրահանգին ես կ'սպասեմք ։

8 Յունիս 1873 Մնամք յարգանօք
Ի դիմաց Թաղ . խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
(կնիք) (Մ–ր–գ–ր–ը–ն)
ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍԵԱՆ Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Պատրիարքական փոխանորդ Տ . Հայրը այս նամակին վրայ կ'արձանագրէ . Այս խնդիրը Տնտեսական խորհրդոյ կը յանձնեմք 'ի քննութիւն և 'ի տնօրէնութիւն , յունիս 9 ։ Այս նամակը Դիւանատան մէջ ոչ արձանագրութիւն ունի և ոչ պաշտօնական որ և է կնիք . ինչպէս որ դիւանապետ էֆենտին ալ յայտարարեց 'ի ներկայութեան Քննիչ Յանձնաժողովոյ , և թէ՝ այդպիսի նամակ մ'եկած ըլլալն նոր իմացած է ։

Տնտեսական խորհուրդն ալ նոյն օրը , յունիս 9 , շաբաթ՝ նիստ կ'ընէ և հետևեալ նամակները կը գրէ ։

Մեծապատիւ Ատենապետ

Թաղական խորհրդոյ Գատըգիւղի

Ձեր այսօրուայ թուականաւ բոլորագիրն Տնտես. խորհրդոյն ստանալով՝ թէ յարուցեալ հաշուոյ խնդիրն և թէ վարժարանից շինութեան գործը քննելու և վարժանն տնօրինելու համար որոշեց յառաջիկայ երկուշաբթի առաւօտ ժամ 12ին Թաղ. խորհրդարանդ գալ անձամբ :

Այս տնօրէնութիւնը Պատուարժան Խորհըրդոյդ հաղորդելով կը խնդրեմք որ բարեհաճիք նոյն օրն Թաղ. խորհրդարանը ներկայ գըտնուիլ և միանգամայն վարժարանին շինութեան Յանձնաժողովոյ անդամոց ծանուցանել որ իրենք ևս անպատճառ ներկայանան :

9 յունիս 1875 Մնամք յարգանօք

Ի դիմաց Տնտես. խորհրդոյ

( Ստ~ր~գր~թի~ն )

Մեծապատիւ Աղայ

Տնտեսական խորհուրդն Գատըգիւղի եկեղեցւոյ վերաբերեալ ինչ ինչ խնդրոց քննութեան համար որոշած է յառաջիկայ երկուշաբթի առաւօտ ժամ 12ին Գատըգիւղ երթալ անձամբ :

Ուստի Տնտեսական խորհուրդն կը խնդրէ Ձեր Ազնուութենէն, որ բարեհաճիք նոյն օրն որոշեալ ժամուն անպատճառ Թաղ. խորհրդարանը ներկայ գտնուիլ և Ձեր քով գտնուած թաղային Սնտուկին հաշիւը ներկայացնել :

9 յունիս 1873 Մնամք յարգանօք

Ի դիմաց Տնտես. խորհրդոյ

(Ստ~ր~գր~թի~ն)

Մեծապատիւ

Եղիա Աղայ Պէյլէրեան

— —

Ատենագրութիւն Քաղ. Ժողովոյ

Նիստ ԶԵ. 26 յուլիս 1875

Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր նախագահութեամբ և Մանուկեան Սենեքերիմ էֆ.ի ատենապետութեամբ Քաղ. Ժողովն ատեան բանալով 'ի ներկայութեան ութ Ժողովականաց, յառաջ քան զայլ ամենայն խնդիր՝ Սրբազան Պատրիարքին գիտողութիւնն ուզեց լսել Գատըգիւղի թաղական խնդրոյն վրայ իր բացակայութեան միջոցին Ժողովոյն ըրած որոշումը չգործադրելուն համար :

Քրիստոստուր էֆ. յառաջ քան զգիտողութիւն Ս. Պատրիարքին փութաց բողոքել Տնտ. խորհրդին դէմ ըսելով թէ իր ձեռնհասութենէն վեր գործած է այս պարագային մէջ, թէ առանց Ժողովին գիտութեան հաղորդուելու Թաղ. խորհրդին բողոքը, Տնտես. խորհուրդն ինքնին միջամտեր է անժամանակ թաղական խնդրոյ մը, և թէ վերջապէս ձեռք մտեր է այս մասնաւոր խնդրոյն մէջ, որ զմեզ այժմ ժամավաճառ կընէ :

Ս. Պատրիարք. — Օրինաց համեմատ որոշում կրնայ ըլլալ, բայց խաղաղութեան նպատակին չծառայէր : Սամաթիոյ խնդրէն հազիւ ազատեցանք, այն ալ յայտնի չէ դեռ, հիմա ալ Գատըգիւղէն կ'սկսի խռովութիւնը : Առջէառաջ նամակ գրուեր է մեզնէ Թաղ. խորհուրդէն հրաժարելոց պատճառաւ, և վստահութիւն յայտնուեր է մնացելոց վրայ. թէև բացարձակ կերպիւ հրաժարողաց հրաժարականներն ընդունուած են գրուած չէ անոր մէջ, բայց եզրակացութենէն այնպէս հետևեցուցեր են որ անոնց հրաժարականներն ընդունուեր են : Հիմա իմ գիտողութիւնս այս է որ Պէյլէրեան էֆ.ի և իր ընկերաց վերահաստատուիլը թաղը վեր 'ի վայր ըներ է. ուստի ես չեմ կրնար պատճառ ըլլալ խռովութիւն ձգելու նոյն թաղին մէջ, և կը պահանջեմ որ Պէյլէրեան էֆ. հոս բերէ Հայոց Պատրիարքին յանձնէ բանկալի հաշուոց արդիւնքն եղող 15 հազար ղշ.ը : Քանի որ դուք մէկ կողմը կը պաշտպանէք, ես ալ պարտաւոր եմ անոր հակառակ կողմը պաշտպանել. ասանկ կերթայ մեր գործը ժամանակէ մը 'ի վեր : Այն որ զարկիր ու ձգեցիր, բաւական համարէ. ի՞նչ կը նշանակէ ոտքով ալ հրել : Քաղ. Ժողովը 12 տարիէ 'ի վեր Սահմանադրութեան անգործադրելի մնացած մէկ փտտած կէտը գործադրել ուզելով, Տնտես. խորհուրդը կիսով չափ փոխեց, խարդախութեամբ միճակ մը ձգեց իր չուզած անդամները դուրս նետեց

(յուզմունք ժողովականաց մէջ։ Ս. Պատրիարք, այս՝ խարդախութիւն ըրիք, — բուռն բողոք ժողովականներէն, — ձայներ — արդէն պատասխանատու էին, անկէն ալ պիտի փախէինք)։ Ո՞վ կը հաւատայ թէ այդ ձեր հանած վիճակը գիտուածի արդիւնք էր, և միթէ կարելի բա՞ն է որ դադարման վիճակը ձեր չազած երեք հոգիին ելլայ։ Վերջապէս Պէյլէրեան էֆ. պէտք է որ այն 15 հազար դ. ը բերէ հոս յանձնէ ։

Խորասանճեան Ա. էֆ. — Մենք խարդախ չե՛նք։ Սրբազա՛ն Հայր, կը բողոքե՛մ այդ բառին դէմ և չեմ ընդունիր։ Ինծի չէ թէ խարդախ, այլ և գիրն արտասանել չե՛մ տար։ Վեհս կը կախուիմ և առանց անդամութիւն մը չեմ ընդունիր։

Բոլոր ժողովականք կը ձայնակցին Ալիքսան էֆին։

Մանուկեան և Հալաճեան էֆ. — (Բարձրաձայն բողոքելով) Մեր խարդախ ըլլալը կամ պիտի ապացուցանէք և կամ ետ պիտի առնէք։

Մանուկեան էֆ. — Սրբազան Հայր, թէ Պատրիարք մնաք և թէ հրաժարիք, մինչև վերջը պիտի բողոքեմ և այդ խարդախ բառին հատուցումը պիտի պահանջեմ ձենէ։ (Ս-դառնալով ժողովին։) Սրբազան Պատրիարքն այնպիսի խօսք մ՚ըրաւ, որ ժողովին ծանր անարգանութիւն է, թէ որ անիրաւութեամբ մնաց բառ, պէտք է որ մենք առանձին անձնական մը բաշխէինք, և իրեն ժամանակ տանք, որպէս զի իր այդ անիրաւութիւնը դրի անէ։

Աստուածատուր Փափազեան էֆ. — Ս. Պատրիարքի գիտցութեանց ամենան մէկէն պատասխան պիտի տամ՝ Դարձ՝ Պէյք, Սրբազան Հայր, ինքզինքնիդ հակառութեան մէջ կը մտնէք՝ ծրատելու Պէյլէրեան էֆ.ի և ետ ընկերաց հրաժարականներովը մեր ներկայութեանց մերժեց ժողովը, այն որ դիտմութիւն մը չըրիք և ընդունեցիք ժողովոյ որոշումը և թաւ սխալ գործադրեցիք։ և այժմ եարքի նիստին մեր բացակայութեանց արտուած վիճակն որոշման վրայ գիտցութիւն կընէք։ Այո՛, մեր բացակայութեանց առած որոշման մը վրայ դիտողութիւն ընելու իրաւունք ունիք և այդ իրաւունքը չենք զլանար ձեզ, բայց տրուած որոշումը վիճակն է, զոր ձեր Սրբազնութիւնն ալ ընդունած է, և եթէ օրինաւոր ալ չըլլար, ժողովոյ կրկին որոշմանը առջև պարտական էք գործադրել։ Նոր կ՚ըսէք թէ Պէյլէրեան էֆ. 15 հազար դ. ը հոս բերէ, գիտենք իրաւունք կամ ունենայ հարցնել թէ ո՞ր օրէնքով կը պահանջէք զայդ։ Պէյլէրեան էֆ. բառ այն որ մեր ներկայութեան. — ակա յանձնէ, դանձը յանձնուի է»։ գիտէ՞ք ի՞նչ բանլ է այս, տակին Նիկողոսյուց ամսուին մէջն է։

Ներկայք՝ կ՚ըսէք թէ ձեր և մեր մէջ հակառակութիւններ կան, անոր համար մեր չը պաշտպանած գործ պիտի պաշտպանէք։ այս յայտարարութեան դէմ կը բողոքենք։ վասն զի մենք կողմնակցութիւններու պաշտպան չենք։ Ներկայք՝ կ՚ըսէք թէ վիճակահանութեան մէջ խարդախութիւն ըրած ենք, մինչդեռ այն որ վիճակահանութեան արդիւնքն ընդունեցիք և անոր տեղ եղած նոր ընտրութիւններն ալ վաւերացուցիք։ Պէտք է որ այս բառերնիդ հատուէք, և եթէ ապացուցանել կարող էք, պարտական էք անձամբ դիմել Ընդհ. ժողովին։

Դատաստանական խորհրդոյ վրայ ալ վիճակաբերութիւն եղաւ Խառն ժողովոյ մէջ, և դադարեցոյց անոր նոր ընտրութեան համար քուէարկութիւն եղաւ զատ զատ երկու ժողովոց մէջ, Քաղ. ժողովը Տէր Եղիշէ քահանայն և Միհրան էֆէնտի Պօհճէկճեան ընտրեց, իսկ Կրօն. ժողովը Տէր Խորէն քահանայն և Պէտրոս էֆէնտի վերատի ընտրեց, անկէ ետքը վիճակ ձգուեցաւ երկու և եկեղեցականք վիճակը հանեցին, և չահեցան Քաղ. ժողովոյ ընտրածները, արդ ի՞նչ կ՚ըսէք, հո՞ն ալ խարդախութիւն եղաւ. ապէ՞լ ինչպէ՞ս կրնայ բացել թէ վիճակաբերութեան մէջ խարդախութիւն ըրած ենք։ Այն օրէ՞ն Կիւմէնից Հայաստանութիւնը կազմեցինք, ալ այնուհետև դրամական մասին Տնօրէն, խորհուրդին հետ գործ չունէինք, գործերնիս Տնօրէնական խորհրդէն համար պահանջելին էր, վասն զի հետաքրքրական չունէր լաւոր կառ-նէինք անոր բանած ընթացքին վրայ, այդ պատճառաւ վիճակաբերութեանէն յետոյ դադարեցուցեր ալ որ վերընտրելի ժողովոյ անդամ թէ ընտրութեան մէ հարկ կը տեսնէր։

գանոնք պատասխանատուութեան հրաւիրե-
լով ։ Սահմանադրութիւնը արդէն դրած էր
Ցնտես․ խորհրդին վրայ որ մայիսի եկածին
պէս տարուան հաշուեցոյցը չինէ ժողովին
յանձնէ ․ ասացինք որ հաշուեցոյց տայ ․
Ցնտես․ խորհուրդն ինչ ընէ նէ աղէկ ․ Երա-
և բառ մը Արքունեան առջի օրէն 10000 գչ․
առնալու կայ քաղելու , ինչ ընենք ․ միթէ
իր պարտքը չէ՞ր բալ թէ Արքունեա՛ն , գնա
ժողովին բաց և նոր հրաման մը բեր որ բառ
մըն հաշիւը քաղեմենք ։ Եւ ինչ կը նշանակ-
ցուցն ու հաշուեկշիռը ժամանակին պատրաստ-
ուած դրկել ժողովին , որպէս զի զբաղական
խնդիրը մինչև ցարդ ժողովի նկատողութեան
առնուլ կարենար ։ Անկէ ետքը ժողովին զի-
տակը նաման կը դրէ նախորդ օրուընէն հա-
մեմատ հաշիւը գոցելու ․ Արքունեանք Ցնտես․
խորհրդին ներկայութեան մէջ նամակը կը
արտէ պատասխանատուութիւնն իմ վրայ է
ըսելով ․ և Ցնտես․ խորհուրդը նորէն կը դրէ
ժողովին որոշումը խնդրելու , որպէս թէ ան-
գէկութիւն չունի եղածներուն ․ Այսպէս ալ
Ցնտես․ խորհուրդն արդէն մարդուերու միմա-
կին մէջ ինկեր էր , իր երկու գիւտապարեր
արմատկաններին առիթով վճարելէն ետև , երե-
կուքին ալ առանց Քաղ․ ժողովի գիտութեան
20 օրան ամին նուէր տուեր է , և Ս․ Պատրիարք
Հօր մայիս յունիս երկու ամսականներն ամ-
բողջ վճարելէ զատ 4—5 հազար դչ․ ի գումար
մ՚ալ աւելի տուեր է , մինչդեռ ժողովին գի-
տակցութիւններուն և Քաղա-Քննչական էփ․ ին
2 օրան ամսականներն անվճար կը մնան ․ մինչ-
դեռ Հոգաբարձան էփ․ էն Զատկին օրերն եղած
150 մեղմի անուակոս փոխառութեան վճարը
մը անցած եղած չէ , զոր մայիս 1 էն սկսեալ
ուղղակի արդ արդիւնքով վճարել խոստացած
էր Ցնտես․ խորհուրդը ։

Ս․ Պատրիարք Հայրն այս միջոցին սկսաւ
Ազգայնական էփ․ ին անձին նախատինքներ ը-
նել ։

Ժողովը բարդեց ․

Հոգաբարձան էփ․ — Հիւանդանոցի հաշիւը , Արք-
բաղան Հօրը , որ գուք թէ՛ն մեր կամ պահ-
ծեր կամ պաշտօնաւոր ժողովական չէ ու զեր
կոր ձեր քոմն , այլ ալլ և էֆէնտի ։

Քրիստոնեայ էփ․ — Արքունեան Հօր այս
վարմունք գէմ խօսիլ կը բողոքեմ ։

Հոգաբարձան էփ․ — Ցնտեսական խորհրդոյ
անդամներէն Մինասեան էփ․ Զօղաննեանց անկայ
անդամներն Պէշիկթաշի մէջ , բառ թէ ձեր
փոխ առած դրամը պատրաստ է , պիտի վճար-
կենք ․ 2 օր ետքը հրամայականին վրայ ե-
կաւ , պատրաստ առանք չուզեցին հոն ձգել ,
և առօր անոր պարգևներ բրին ։

Փափազեան էփ․ — Պատասխանատու են
Ցնտեսականք ․ անոր հաշիւնին համարականին
բերել առած եմ այսօր ․ անոր ( ըսեցնելով
հաշուէթղթերը ) իրենց մէկ գիւտապարին
նուէր 2400 գչ․ ուրիշի մը նուէր 2400 գչ․
ուրիշ գիւտապարի մը փոխանակ 5 հարիւրի
վեց հարիւր դչ․ ամսական հակառակ որոշման
Քաղ․ ժողովոյ ․ 8474 գչ․ Պարտուց բարձման
յանձնաժողովոյ անդեկագրին առաջուէքի համար
վճարուած ․ Արքունեա՛ն Հայր գո՞ւք ալ ասոր
ներկայ մը կը պարզուի այդքան ծախքով ։

Ս․ Պատրիարք ․ — Նախորդ Ցնտես․ խոր-
հուրդն ալ 7000 գչ․ տուած է իր անդեկագրին
պարզութեանը համար ։

Փափազեան էփ․ — Անոք նախորդ Ցնտե-
սականին համարատուն չեն ։

Այս միջոցին ժողովականք ուրիշ ստենոկ
մեկնելով , առանձին խորհուրդ ընելէ ետև
նորէն Ս․ Պատրիարքին քով ժողովեցան ։

Ազգայնական Փափազեան էփ․ ( յանուն Քաղ․
ժողովոյ ) ․ — Ժողովն առանձին խորհրդակցու-
թեան մէջ որոշեց ցաւ յայտնել Ձեր Սրբազ-
նութեան դէմ մը առաջ բերած անպարկեշտութը
համար , միանգամայն որոշեց ցաւ յայտնել
մինչև ցարդ այն առանձին նիստը չզբաղելո-
նուդ վրայ , յորում Ձեր Ամենապատուութեան և Վեհա-
փառութեան մէջ եղած անհամաձայնութեան խնդ-
րիները նկատողութեան պիտի առնուէին այս
նիստը գումարել յանձն առած էիք և ցարդ
չըրիք և այժմ մինչև անորոշութիւն ալ եղան ․
Ուստի ժողովը որոշեց խնամ ժողով հրաւիրել ,
որպէս զի եթէ չկրնանք համաձայնիլ՝ վերջնա-
կան կերպիւ գիտնանք Ընդհանուր ժողովին ։

Ս. Պատրիարք. — Նախ ես Պատրիարք ե՞մ մի, այն քանի. մեր առանձնական միջոցին եւ առ Բ. Դրան հրաժարականս գրել տալ. հիմայ ալ այդ խօսքերն ընելու տեղի չէ մնացած, իբրեւ Պատրիարք չեմ մտիկ ըներ.

Զայս ըսելով Ս. Պատրիարքն ելաւ իր աթոռէն եւ անցաւ սենեկին վրայ նստաւ.

Ժողովը պահ մը լուռ կենալէն յետոյ.

Ատենապետ էֆ. — Մենք զՁեզ Պատրիարք կը ճանչնանք, քանի որ Ընդհ. ժողովը զՁեզ Պատրիարք ճանչնայ. Դուք, Սրբազան Հայր, պարտաւոր էք կանխաւ Ձեր հրաժարականը Ընդհ. ժողովոյ տալ, եւ ոչ Բ. Դրան. Անմիջապէս հրաժարականնիդ Բ. Դրան տալով շատ անհաճոյ տարաձայնութեանց տեղի տուած պիտի ըլլաք. եւ մենք իբրեւ Քաղ. ժողով պարտք կ'զգանք փութալ եւ Ընդհ. ժողովոյ գիտուցանել Ձեր Սրբազնութեան հրաժարականը. եթէ դուք չճանչնաք Ընդհ. ժողով գումարել, խառն ժողովոյ գիտանք, նոյն իսկ Քաղ. ժողովոյ դիւանն ալ պիտի փութայ հրաւիրել Ընդհ. ժողովը. Ասիկա մեր անխուսելի պարտքն է, եւ նոյնպէս Ձեր Սրբազնութեան ալ անխուսելի պարտքն է նախ Ընդհ. ժողովոյ տալ հրաժարականնիդ, եւ բացատրել անոր Ձեր հրաժարման պատճառները.

Ս. Պատրիարք. — Իմ հրաժարման ուրիշ պատճառ չունիմ. բայց եթէ կը տեսնեմ որ Բ. Դրան եւ Ազգին մէջ յարաբերութիւն լաւ վիճակի մէջ չէ. գուցէ ես ըլլամ պատճառ. ուստի լաւ է որ ես դուրս ելնեմ.

Ատենապետ էֆ. — Բ. Դրան եւ Ազգին մէջ յարաբերութեանց դէշ ըլլալուն ոչ պատճառ կայ եւ ոչ օրինակ. ինչո՞ւն այսպէս կը կարծէք Ձեր Սրբազնութիւնը. Առանց յանկարծական հրաժարական տալու ելնել եւ առանց պատճառ մը ընելը լաւ հեռանալ չունենք. Ազգին խաղաղութիւն պէտք է ամեն բանէ առաջ. եւ ասոր համար եթէ հրաժարական ալ տալ պէտք ըլլայ, Ընդհ. ժողովին կրնայ տալուիլ. այս միջոցէն դուրս ինչ որ ալ ընենք Ազգին վնասակար է, եւ ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրենք.

Ս. Պատրիարք. — Ես ալ մտածեր եմ Ընդհանուր ժողով հրաւիրել առաջիկայ չորսթուն եւ հրաժարականս տալ, ինչպէս որ հրաժարականիս ուրիշ տեղի մը կ'ակնար համար է որ Ազգին Դրան հետ ունեցած յարաբերութիւնք շատ նուազ վիճակի մէջ ինկած են. Վարչութեան գործերն այլեւս չեն երթար, ասոր դարման մը պէտք է. կարելի է որ պակասութիւնն իմ քովս է, Ընդհանուր ժողովին առջեւ ալ պիտի խոստովանիմ զայս, եւ գուցէ իմ հրաժարելովս դարման մը կ'ըլլայ.

Դիւանը առաջարկեց թէ երեքշաբթի օրուան համար խառն ժողովոյ հրաւէր հարկ է ընել.

Սրբազան Պատրիարքը յայտնեց թէ ինք ոչ ես կը միջամտեմ եւ ոչ ալ խառն ժողովոյ ներկայ գտնուիլ կ'ուզէ.

Ժողովականք տեսնելէն որ Ընդհանուր ժողովոյ հրաւէրը յառաջիկայ երեքշաբթի օրուան խառն ժողովէն ետեւ մնաց է.

Հուսկ ուրեմն Ս. Պատրիարքը հաճեցաւ փոխանորդ Հօր հրաւիրել տալ եւ ինք ալ երեքշաբթի օրուան խառն ժողովին ներկայ գտնուիլ, եւ ժողովը ցրուեցաւ.

—

Խառն ժողով գումարելու յանկարծեալ էր յուլիս 31ի օրը. Նոյն օրը Կրօնական եւ Քաղաքական ժողովականք գումարուած էին, եւ Ս. Պատրիարք Հայրը Կրօնաժողովական կը գտնուէր. Քաղ. ժողովոյ դիւանը նախորդ յուլիս 26ի նիստին մէջ եղածները պատմեց եւ ծանոյց խառն ժողով գումարելու հարկը. որպէս զի Ս. Պատրիարք Հօր եւ Վարչութեան մէջ եղած անհամաձայնութեան խնդիրներն ալ (1) որոնց համար յառաջ նորա

(1) Ս. Պատրիարքը յունիս 30ի նիստին մէջ երբ Քաղ. ժողովը Կեսարիոյ Հոգաբարձութիւնը կազմել կը ձեռնարկէր, ընդդիմութիւն ցուցնելով յայտարարեց թէ «իմ եւ ձեր մէջ եղած տարբերութիւնը այս է, ես կ'ըսեմ թէ այս Սահմանադրութիւնը չը կրնար գործադրուիլ, դուք կը գործադրուի կ'ըսէք. Կեսարիոյ Հոգաբարձութիւնն ալ չէ յանձնած մինչեւ ցայժմ, պատճառը Սահմանադրութեան գործադրութեան դժուարութիւնն է»:

ղիսի ըլլալ զայդ ու չեղաւ , վերջնական կերպով նկատողութեան առնուին , զի արդէն Քաղ․ ժողովը Ընդհ․ ժողովոյ զինելու պատրաստած է իրեն դէմ եղած վերջին առարկանցը համար , ասոնք նաև այն խնդիրները որ զորս անլուծանելի կամ առ կախ մնացած են ։

Երկու ժողովոց ատենապետներուն միջնորդ 'ի ժողովարան հրաւիրուեցաւ Ս․ Պատրիարք Հայրը , որ դարձեալ ծանոյց թէ , ինք արդէն Ընդհ․ ժողով հրաւիրած է իր հրաժարականը տալու համար , պատճառելով թէ Ցեղական և Քաղաքական Սահմանադրութեան կազմութիւնը առաջարկած և ոչ Կառավարութենէն և ոչ Վերաքննիչ Յանձնաժողովէն ընդունուած չէր ։ (1)

Մինչդեռ Կրօնական և Քաղաքական ժո-

---

Թէև Ս․ Պատրիարքը սկիզբէն մինչև վերջը այս կարծիքին ունէր , բայց Կառավարութեան միաձայն Սահմանադրական ընթացքը , կրնայ ապացուցանել թէ ախտաւորութեան և յարատևութեան ամէն բան կը յաջողի , քանզի է որ կանգ ըլլայ ախտաւորին կողմէն․ Կառավարութիւնը (Կրօն․ և Քաղ․ ժողովները) պատրաստական էին իրենց յարգել օրէնքը , և ժողովրդեան յարգել տալու համար օրէնքը գործադրել ամէն ուրեք , և օրինաց գործադրութիւնը դիւրացնելու համար յառաջ հրահանգներ պատրաստել , և Սահմանադրական Կառավարութիւնն իր ամէն ճիգերովը կաշխատէր համար վարչական յարաբերութիւնները ճշդել , ինչպէս որ Կառավարութիւնն հակառակ Ս․ Պատրիարքի յարուցած դժուարութեանց յաջողեցաւ՝ Ազգ․ Ընդհ․ ժողովոյ ապրեցութեան և պաշտպանութեանը ներքև՝ ընել իր միաձայն ընթացքին մէջ , որչափ որ ժամանակն ու միջոցները ներեցին ․ Այս միաձայն Սահմանադրական ընթացին արդիւնքը սիրով տեսանք , երբ Ազգ․ Ընդհ․ ժողովը բարեհաճի քննութեան առնուլ ։

(1) Ցեղական Սահմանադրութեան հաստատուելու առաջարկութիւնը Ս․ Պատրիարք Հայրը Կառավարութեան բերած էր և խնդրոյ կարգն անցած , 1875 Մարտ 15ի խառն ժողովոյ նիստին մէջ ․

դումները Ս․ Պատրիարքի նախագահութեանը այս խնդրով կ'ըլլային , ժողովականին գործը խնդրով ժողովրդեան ազնիւ մը ըլլալ երա․ և պահ մը յետոյ ժողովականներն գրաները ընդունելութեան բացուեցան ․ ․ ․ ․

Ս․ Պատրիարքն արդէն խորհուրդ տուեալ Քաղաքական ժողովը ժողովարանէն դուրս հրաժարեցաւ ։ Ինչպէս 'ի ներկայութեան Ս․ Պատրիարքին․ որով պարտաւորեցաւ Քաղ․ ժողովն իր հրաժարականը տալ ։

---

Ընդհանուր ժողովոյ կողմէն կարգեալ Քննիչ Յանձնաժողովը 'ի սկզբան չուզեց այս անարգանաց խնդրոյն վրայ ակնկալութիւն առնել , բայց Քաղ․ ժողովոյ դիւանը 'ի դիմաց ժողովոյ կրկին անգամ գնաց Քննիչ Յանձնաժողովին և այդ ամէն անարգանաց դէմ խօսք բողոքեց․ փասն զի այս միջոցներով ոչ միայն իրեն Քաղ․ ժողովը՝ այլ և անխարժ և անթացակ և Սահմանադրութեան կողմեան փոփոխման դրութիւնը հարուածուեցաւ ։

Քննիչ Յանձնաժողովն իր մեծահասութենէն վեր համարեց այս բողոքին քննութիւն ընել , բայց խօսք տուաւ այս բողոքը Ազգային Ընդհանուր ժողովոյ ներկայացնել ։

---

այսպէս արձանագրուած է ․ «Պատրիարքական խորհրդականի և Ցեղական մասնաժողովոյ առաջարկութիւնն , որ Արտաքին Պատրիարքին կողմէ եկած և խնդրոյ կարգն անցած էր ժամանակէ մը 'ի վեր , թէ և քանի մը անգամ ժողովին ուղեց 'ի նկատի առնել , բայց ամէն անգամ Նորին Սրբազնութիւնն ուրիշ առխաղական խնդիրները նախընտրելով եւ ձգած ըլլալուն համար , որոշուեցաւ այս անգամ խնդրոյ կարգէն վերցնել , և երբ Նորին Սրբազնութիւնն ուզէ նորէն խնդրոյ կարգն անցընել ։ »

Նորին Սրբազնութիւնը վերջին յուլիս 31 ի խառն ժողովոյ նիստին մէջ այս խնդիրը յարոյց , և արդէն ալ իր հրաժարականը տալու համար Ընդհ․ ժողով հրաւիրած ըլլալն ալ 'ի միտս ծանոյց ․

Թէև Ս. Պատրիարքը իր հրաժարագրին մէջ այս նշանաւոր օրը (յուլիս 31) «իբրև հետևանք օրինաց խախտ և տառական գործադրութեան» կընկատէ և կ'ըսէ թէ, «Թող ապագային վկայ լինի հազար ութ հարիւր եօթանասուն և երեք յուլիս 31 Հայոց Պատրիարքարանի դժպատեհ դէպքը:»

Սակայն Քաղ. Ժողովը կ'ըսէ թէ «օրինաց գործադրութիւնն անկարելի ցուցընելու համար մէկ տարին հետէ ձեռք առնուած միջոցներուն ամենէն վերջինն ու դժնդակն եղաւ յուլիս 31 ի դէպքը,» և ցաւելով կը յաւելցընէ թէ,

«Պատմութիւնը Խրիմեան Մկրտիչ Արքաշանի Պատրիարքութեան թուականին մէջ պիտի արձանագրէ Սահմանադրական օրինաւոր վարչութեան մը դէմ՝ Ս. Պատրիարքի նախագահութեանը և ներկայութեանը գործուած այսպիսի հալածում մը, այնպիսի վարչութեան մը դէմ, որուն համար նոյն իսկ Ս. Պատրիարքն ալ իր հրաժարագրին մէջ կը վկայէ թէ իր պաշտօնը Սահմանադրութեան համաձայն վարած է սկիզբէն մինչև վերջը»:

Ի վաւերացումն ստորագրեալ են:

Ա. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ

Բ. ՀԱԼԱՃԵԱՆ

Բ. ՔԻՒՐՔՃԻՊԱՇԵԱՆ

Գ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Գ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ վասն Եղբօրն Կարապետ Գարակէօզեան

Ե. ՃԻԼԱՃԵԱՆ

Ս. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ